

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՅԱՆ

ՆՐԱՆՑ ՃՈՒՏԸ

1. ՍԱՅՈՆ, 2. ԱՐԴՈՒԼ, 3. ՄԵՐԿԵ,
4. ԿՈՆԴՈՒԿՈՐ, 5. ԿԵՐՔԸ, 6. ՆԱՐԳԻԶԸ.

891.98
7-35

„ՀԵՐՄԵՆԻՎ“ — ՅԵՐԵՎԱՆ — 1929


ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԱՆ

ՆՐԱՆՑ ԺՊԻՏԸ

1. ԱԱԹՈՒ, 2. ԱԲԳՈՒԼ, 3. ՄԵՐԿԵ,
4. ԿՈՆԴՈՒԿՏՈՐ, 5. ՎԵՐՔԸ, 6. ՆԱՐԴԻՋԸ.

891.98
7-35

19 NOV 2011



891-99
7-35

ար

Դերենիկ Դեմիքչյան

ՆՐԱՆՑ ԺՈՒԾԸ

1. Սպուն, 2. ԱԲԴՈՒԼ, 3. ՄԵՐԿԵ,
4. ԻՐԵՐ, 5. ԿՈՆԴՈՒԿՏՈՐ, 6. ՎԵՐՔԸ

№ 17.

“ՀԵՐԱՆ” ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929



27722

Ս Ա Թ Ո Ն

ՏԵՐՄԵՑ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 23
ԳՐԱՌԵՊ. № 2086-
ՏԵՐԱԺ 1200



8283-53

Սաթոն Կոտայքի գյուղերից Յերևան գառվազ վարձվեց մի խորհրդային ծառայողի ընտանիքում տան աշխատակից: Զահել աղջիկ եր, մաղերը գղղղված, շորերից ծլանդները կախում հայացք ուներ, բայց ներքուստ հանդարտ եր, բարի:

Ծառայողի ընտանիքը բավականին խստապահանջ մարդիկ եյին: Բավական ել շատվորէ ինքը՝ աեխնիկ Սմբատյանը, կինը՝ «տիկին Աննան», աղջիկները մեծ ու կրտսեր և փոքրիկ կոլյան:

Հյուրեր շատ եյին լինում և հաճախ. այնպես վոր՝ Սաթոն հենց սկզբից գործից աչք չեր բաց անում: Յերբ դուրսն իր նման բան անող աղջիկները նրան հարցնում եյին.

— Գործդ վնաց ա, աղջի:

— Շատ ա, — պատասխանում եր Սաթոն, և ավելացնում — զե՞, տուն ա, վնաց կարա գործը շատ չլինի: Գեղում քի՞չ ա:

Սաթոն այդպես ել նայում եր գործի վրա,
վոր գործը կա, կա ու կա—գետի տես գալիս եր,
լցվում, իսկ դու պիտի կանգնես ափին անդա-
դար ջուրը քաշես: Գործը վերջ չունի:

Առավոտը վաղ կոշիկներ սրբել, թեյ պատ-
րաստել, գնալ հացի հերթի, գնալ Գյուղկոռաք
պանրի, յուղի, մեղրի, շուկա՝ մթերքի: Ապա
սենյակներ մաքրել, ճաշին հոկել, աման լվալ,
հետո ելի թեյ, ընթրիք... Հյուրեր յեկած ժամա-
նակ ել մինչև կես գիշեր սպասել, վոր ընթրիքը
վերջանա, հյուրերը գնան...

Սա անտանելի յեր Սաթոյի համար: Նայ
վոր սովոր եր գյուղում հավերի հետ քնել, ար-
լորի հետ զարթնել՝ նստում եր խոհանոցում և
գլխով ռտանձ կշոռում: Քնում եր և իսկույն
յերաղ տեսնում—իրենց գյուղն ե, գետափը
ուսիների ստվերներում հավաքված են իր ըն-
կերուհիները: Ինքը նստած ե գետափի քարին,
ջուրը վշշում ե, թշթշում: Ծնկերուհիներն իրեն-
շրջապատել՝ ծիծաղում են. «Աղջի Սաթո, ջուրը
թափվեց, իջեցրու, իջեցրու: Սաթոն ժամում
ե միայն. «գետի ջուրը վժնց կիջեցնեն»:

— Աղջի, քեզ հետ եմ, ե, թափվեց, իջե-
ցրու:

Սաթոն աչքերը բաց ե անում:
Վոչ գետ, վոչ աղջիկներ: Զարացած տիկին

Աննան ե, կողքին կերոսինկի վրա թափվող թեյ-
ամանը: Կըակը բարձրացել ե:

— Քնում ես, ինչպես կարելի յե, աչքդ
վրան պահի,— գոռում ե տիկինը:

Սաթոն վեր ե թոչում, ամոթխած ժպառում
և աչքերը տրոքելով իջեցնում կերոսինկան: Թեյ
ե պատրաստում, վոր պիտի խմեն ընթրիքի վրա:

Կես գիշերն անց ե, հավերը խոսում են
արդեն:

«Տնաշենները յերբ են քնում»— մըթմըթում
ե քնաթաթախ Սաթոն և կոնատակը քորում:
Իսկ ներսից լսվում ե խորհրդային ծառայող
Փորժի աջորային ձայնը.

— «Մոռաս-կա, ժիտե վի-յեյ...»:

Սաթոն ձեռը կոնատակին քնում ե և զլուխը
կշռում, վեր թոչում, կըկին քնում:

Այսպես ծանր ե գիշերը: Իսկ ցերեկները
վոչինչ, տանում ե: Սիրում ե գործ անել: Ա-
ռողջ ե, յեռանդուն, բարեխիղճ:

— Թշերից արյուն ե կաթում,— տառում ե
տիկին Աննան՝ կարծես հանդիմանորեն:

Սաթոն առավոտից մինչև գիշեր տանն ե,
տան գործում. նա վոչ մի տեղ չի գնում:

Դուրսն ով ել ունի վոր: Իրենց գյուղից
մեկը հազիվ պատահի, վորին խնդրի շատ բարե
տանել նանին:

Մի անգամ, փողոց գնացած ժամանակ,
ուշացավ: Տիկին Աննան խիստ հանդիմանեց:

— Փողոցներում ի՞նչ բան ունիս: Գործդրանն ե, յեկ տուն:

Յեվ Սաթոն մնում եր տանը՝ անգամ այն
ժամանակ, յերբ մի ժամ պարապ եր:

Այն ժամանակ ել զբաղեցնում եր փոքրիկ
կոլյային, վոր նրան ձի արած, նստում եր վղին,
ստիպում իրան ման ածել պատշպամբում:

Մի ուրիշ անգամ ել Սաթոն հրաման ուզեց
կինո գնալու:

— Ո՞վ ե տանում, — անհանգստացավ տիկին Աննան:

— Յես, բիլեթ առա:

— Ո՞վ սովորեցրեց տեղը, — գոչեց տիկին
Աննան, կարծես հանցանք եր գործված:

— Ծանոթ աղջկերը:

— Ծանոթ աղջկերը թող իրենք գնան: Դու
փող ունիս՝ պահի քեզ համար, գյուղ կուղար-
կես: Հարկավոր չե, ել չդնաս:

Սաթոն խոստացավ և գնաց կինո:

Յերբ Սմբատյանը յեկավ տուն և ուզեց
ծխախոտ բերել տալ՝ ասացին, վոր Սաթոն կի-
նո յե գնացել:

— Աչքներս լույս, — մըթմըթաց Սմբատյա-
նը, — հըմ, հըմ...

— Մենք նստենք տանը, քոծը գնա կինո, —
նկատեց մեծ աղջիկը և քմծիծաղ տվեց:

— Կինոն դեռ վոչինչ, յեթե դուրսն իրա-
վունքներ-բաներ չսովորի:

Այսուհետև Սաթոն փողոց գնալ գալով՝ բե-
րում եր ականջն ընկած ամեն տեսակ խառն
խուռն տեղեկություններ, լավ ել չհասկացած:

— Կին-բաժնի հրահանգչուհի յե:

— Ո՞վ ե «հրահանգչուհի...» գեմքը կոկիկ
ժամածում ե տիկին Աննան և աշքով անում
մեծ աղջկան:

— Ընկեր Ասլանյանը: Երթում ե մեր գե-
ղաքենքը կազմակերպելու, — ասում ե Սաթոն
միամիտ զրույցի ձայնով:

Նրա անսպասելի բառարանը զվարճացնում
է տանեցիներին:

Նրանք իրար են նայում կոմիկ լըջությամբ
և քթների տակին ծիծաղում:

— Ասում ես հրահանգչուհի յե, ելի, — ան-
նկատելի հեղնում ե տիկին Աննան, — լավ, ի՞նչ
ե անում գյուղում:

— Կանանց անգրագիտությունը վերացնում
ա, — պատասխանում ե Սաթոն կոտրած ժպիտով:

Բոլորը ծիծաղում են: Ծիծաղում ե և ինքը՝
Սաթոն՝ մասամբ իր անսովորության, մասամբ
ել հենց իր գործածած բառերի վրա, վոր իր ել

ծիծաղը բերում են։ Խորթ ե նոր բաների մասին խոսելը։

Մի որ ել հացի գնալով ուշացավ։

— Վարսեղ եյիր, — խեթեց տիկին Աննան։

— Պրոֆմիություն եյի գնացել։ Ասում են՝ պտի մտնես պրոֆմիությունը։

— Հիշ՝ կծեց լեզուն տիկին Աննան և հազիվ լսելի մռմռաց։

— Եղ եր պակաս։

Սաթոն կողքանց մտիկ տվեց տիկինոջն ու վրա ընկավ իր ամաններին, սկսեց արագ-արագ լվալ։

— Եւ լավ, ինչի՞դ ե պետք պրոֆմիությունը, — փորձեց տիկին Աննան։

— Ի՞նչ իմանամ, ասում են՝ հմի ամեն աշխատանք անող պիտի գրվի։

— Սիալ են ասել. կուզես կդրվես, կուզես վոչ։

— Չեմ իմանում, ընկերուհիներս տարան։

Տիկին Աննան անհանգստացավ։ Ճաշին հայտնեց Սմբատյանին։ Լուրը մեծ անախորժությամբ ընդունվեց աղջիկների կողմից։

— Հիմի կնստի մեր ընքին։ Ժամով կաշխատի, հանգստյան որ կուզի, ժողով, կոլեկտիվ, նորմա, լիկվիդացիա։ Գտանք դիմացավանքը։

— Բաս, մենք կդառնանք քոծ, նա՝ տանտիկին, — ասաց տիկին Աննան։

Մի քանի որ հետո Սաթոն բոլոր ձևականություններով մտավ պրոֆմիություն։

Այդ որը ճաշը վերջացավ տխուր լուռթյամբ։ Սմբատյանը «հըմ, հըմ» արավ և ծխախոտը վառեց։

— Ի՞նչ կհրամայես անել, — ձեռները չոելով յեզրակացրեց նա. — «Աշխատանքի կոմիսարիատ», «պրոֆեսիոնալ շահեր», «բանվոր ուժի կազմակերպություն»...

— Յեվ... զեղացի Սաթոն, — ծիծաղեց կրտսեր աղջիկը։

— Սուս, — արեց տիկին Աննան, — ոյիկավ» Ներս մտավ «կազմակերպված» Սաթոն ափսեները տանելու։ Բոլորը լուռ նայեցին նրան և սոթերը կիտած տվին իրենց ափսեները։

Դեպքն անախորժ եր։ Զեռաց ամեն ինչ փոխվեց։ Սաթոն գառավ դեմք, ֆիգուրա, վորակ։ Կարծես յերկաթը փոխվեց պողպատին կորցնելով հին հատկությունը։ Սաթոյի դիմագծերն անգամ արտահայտություն ստացան։ Կոպիտ հոնքերի արանքում կամքի մի շեշտ գծագրվեց՝ տանեցիների համար խիստ անդուրեկան։ Յեվ այդ նախկին բարեխիղճ, աշխատող և աշխարհից անտեղյակ Սաթոն, վոր իր առույց, դյուզական բազուկներով սրբում, լվանում, յեփում, խոհանոցից ներս եր բերում

ամսորժ, հաճույք, հարմարություն, վորը չեք
հիվանդանում, չեք տնքում, միշտ պատրաստ
եք վազելու, բժշկի, դեղի, մթերքի, լուրի, ան-
դիտակ իր արժեքին; իրավունքներին, ահա այդ
Սաթոն հիմի քաղաքացի յե, կազմակերպված
մարդ...

Բայց վերջիվերջո հաշտվեցին «աղետի»
հետ: Նոր հարմար աղջիկ չկար, յեղածներն ել
կամ «զող» եյին, կամ «ծուլլ»:

Սաթոն որինակելի յեր, ժիր, բարի: Յեվ,
վերջապես, լիկվիդացիոնի հարց կար...

Նրան թողին իրենց մոտ և սկսեցին զգույշ
մինել: Ծանր եր այդ «զգույշ»ը, բայց ելի լա-
վագույնն այդ եր:

Շուտով դրությունը լրջից փոխվեց նաև
կոմիկականի. Սաթոն սկսեց տերմինների ան-
խընա կոտրտուք:

«Քաղաքի մաշտաբով հաց ա յեկել»:
«Կանանց որն այս տարի նոր տեմպով պատե-
անեն», «Հարցուր տոկոսով ասում եմ, վոր
ձիչա առ»:

Միծաղու մեռնում եյին...

Յերբեմն ել, թեյին կամ ճաշին, Սաթոն
մուտք եր սեղանատանը կանգնած և սկսում
պատմել պրոֆմիության գծով տարած աշխա-
տանքների մասին: Լավ չեք մարսել կազմակեր-

պության արտաքին ձևերը, բայց ներքին եյու-
թյունը բնազդով ըմբռնել եր:

Խոսում եր այիս ազատ, խտիր չդնելով
իր և տանեցիների մեջ: Շուտով սկսեց խունգին
նաև Սմբատյանի և հյուրերի խոսակցությանը՝
Ընդհատում եր նըանց և, չնայած վոր հյուրերը
նրան չեյին հարցնում, սիրում եր իր սեփական
բացարությունները տալ: Բացատրում եր յեր-
կար, դժվար եր նրան ընդհատել: Սաթոն հար-
կադրում եր իրեն լսել՝ թեկուղ արտաքին քա-
ղաքավարությամբ:

Մի անգամ ել կարծիք հայտնեց,

— Ուսումնականների գործն իհարկե դժվար
ա, ամա բանվորի և գյուղացու գործին չե
հասնի. սրանք վոր չլեն աշխարք չի ապրի:

— Ուրեմն ուսումը վոշինչ, իշի գլխի պետ
ապրենք, ուսումնականներին ջնուն ածենք, —
տաքացավ Սմբատյանը, ինչ վոր ներքին կու-
տակված թույներ ժայթքելով:

— Ինչի համար, —խոսեց հանդարտ Սաթոն, —
ուսումը լավ բան ա: Այ են ել ձեռք կըերենք
ու ամեն բան կթամամի:

— Զենք կըերեք եղանակ շուտ, այ, չեմ
դիտում:

Սաթոն անխոռով ամանները գուրս տարավէ
նա լավ ել չեք հասկանում տնեցիների չարու-
թյան պատճառը:

— Այ, եղագես ե. զլուխները լցնում են ու
քաց թողնում: Ի՞նչ կարող ես խոսել սրա դեմ,—
ասաց Սմբատյանը ծխելով:

Մի յերեկո Սաթոն շատ ուշացավ: Գնացել
եր ժողով: Տիկին Աննան պատվիրել եր, վոր
չուշանա: Բայց ուշացավ և ուշացավ այն ժառ-
մանակ, յերբ լվացը կիտված եր կիսալվա,
ջրմուղի ջուրը կտրվել, հացի մեծ հերթ կար:
Միաժամանակ յերեխան ելնոր եր առողջանում
պետք եր դեղի գնալ:

Սա արդեն հանդինություն եր, Տիկին Ան-
նայի տան հիմքերը խախտվում եյին:

— Քոծ չի, այլ իշխանուհի: Քանի գնաց
լրբացավ, — դոչեց տիկին Աննան զայրացած, —
յես անկարող եմ այսպես ապրել: Թող գա: ցույց
կտամ ժողովը:

— Ծառան ծառա չի, — նկատեց մեծ աղջի-
կը, — ապերախտ խող, հին վերարկուս ել տիկին
թե խելոքանա:

— Թող գա տուն՝ դուրս կանեմ, կասեմ
Հնանդամվիր ուր ուղում ես, — վճռեց տիկին
Աննան:

— Հըմ, հըմ, — արեց Սմբատյանը և սկսեց
շվացնել:

Յերեկոյան թեյն ուշանում եր, հաց չկար
դեղ եր պետք յերեխայի համար, լվացքն անա-

խորժ բուրմունքով սպասում եր լվացարար
ձեռքի: Հարևաններն ել ջուր չունեյին: Սարսա-
փը տիրեց ընտանիքին:

Տիկին Աննայի կրտսեր աղջիկը վերցրեց
փոքր վեզրոն և բարձրակրունկ քայլերով վեր-
ցոն շրջազգեստից հեռու բռնած՝ գնաց ջուր
թերելու, բայց իսկույն հետ դառավի: Զարացած
կանայք այնպիսի դժվարոց եյին բարձրացրել,
վոր ֆիզիկական ուժ եր պետք նրանց միջից
ջուր հանելու համար:

— Հիմի մվ ջուր բերի, մվ հաց բերի, ինչ
կրակ ու պատիժ եր, — սկսեց կատաղել տիկին
Աննան, — մաքդ գնա եղ ժողովը, մազերը պո-
կելով տուն բերի, ե:

— Հըմ, հըմ, — արեց Սմբատյանը և ժըպ-
տաց դառնազին, — եղ մեր գնացիր...

Վերջապես Սաթոն յեկավ: Նա լուրջ եր,
կենաքոնացած: Պատշաճրից բարձրացավ թե
չե՝ տիկին Աննան հարձակվեց վրան:

— Ի՞նչու ուշացար:
— Զեկուցում կար:
— Բա մեր ջնւը, հացը, լվացը:
— Յես ինչ անեմ, սպասիր՝ կը ի: Բա ժո-
ղով չգնամ:
— Ի՞նչ անեմ ժողովդ՝ յես եստեղ սոված,
ծարավ:

— Եղ ա. ուզում ես՝ ուզի, ուզում ես՝ չե։
— Չեմ ուզում. եզուց գնա իմ տանից։
— Շատ լավ, —ասաց Սաթոն հանդարտ և
սկսեց իր գործը, կարծես բանի տեղ չդնելով
սպառնալիքը։

Խլեց խոշոր վեղրոները և պատըշգամբը
դմբդմբացնելով վազեց ջրի։ Շուտով կարմրած,
առույգ, հեալով յետ դառավ, ջուրը կաթկթեցնե-
լով։ Ապա վազեց հացի և մի տասը բողեյից
բերեց լավ թխած անուշահոտ հացի բոքոնը։
Մեռած տունը լցվեց ախորժ աշխուժով, դա-
դարած կյանքը յեկավ լցվեց տունը։ Մի փոքը
անց՝ յերեկոն արդեն քաղցր սկսում եր հալվել
դուրսը, բակում, սենյակում։

Ամեն ինչ խաղաղեց։ Ելեկտրական լույսը
վոսկեղոծեց թեյասեղանն ու շուրջը շարված
Սյբատյանի ընտանիքը։ Թեյի թարմ բուրմունքը
մլում եր ողի մեջ հացի հոտի հետ։ Տրամա-
դրությունները բացվեց։ Մոռացան Սաթոյի ա-
րարմունքը և ատելության փուշը կոտրվեց մի
առ ժամ։

— Հը՞ է, հիմի դուրս ես անում, —հարցրեց
Սյբատյանը կնոջը՝ յետ նստելով աթոռին։

— Ախը վհնց եմ դուրս անում, —գանդատ-
վել սկսեց տիկինը, —վհնց գտնեմ նորը, վհնց
ջոկեմ։ Մենք սրա ձեռքին դերի յենք։

— Հը՞ մ, բա վհնց գիտեիք...ի՞նչ ենք մենք...
Սյբատյանը վեր կացավ, մոտեցավ նար-
դուն և փոքր աղջկա հետ սկսեց խաղալ. Մեծը
նստեց դաշնամուրի մոտ և մատները սահեցնե-
լով ծայր տվեց Շոպենի սոնատին։ Տիկին Ան-
նան գնաց խոհանոց։

Հենց ներս մտավ լվացքի թանձր գոլորշին
անախորժ համբուրեց նրա այտերը։

Մաթոն լվացք եր անում. Բարկացած եր,
բայց զուսպ։ Միայն ջլապինդ մատները խլելով
սպիտակեղենը ուժով խեղդում ելին տաշտի մեծ։

Քաղքենի «տիկինը» կանգնեց, մտիկ տվեց
«յերեկվա» զյուղացու աղջկան, վոր զյուղից
յեկավ, աճեց, բարձրացավ, և այսոր սկսել ե
հուպ տալ իրեն։

Ատելությամբ դիմեց նրան և լոեց։ Սաթոն
առողջ եր ինչպես կյանքը և իր աշխատանքով
կյանքից բաժին եր շնորհում քաղքենի տիկինոջ։

Սա ճնշվեց, վախեցավ ծպտուն հանել,
զգաց իր անպետքությունը և զգույշ, զող կատ-
վի պես դուրս յեկավ խոհանոցից։



Արդուլը Պարսկաբանից յեկել մտել եր
Յերևանի բամբակազտիչ գործարանը սե-բան-
վոր:

Հետք բերել եր մի յերիզավոր արախչին,
մի կավագույն ջվալ վերնաշապիկ, լայն թող-
կամոր կաշվե գոտի և իր առողջակազմ հա-
սակը:

Գործը պարզ եր: Բաց անել մամլող մեքե-
նայի կափարիչը, բամբակի հակը հանել մեքե-
նայի միջից: Եր ընկեր Ահմադն ու Գրիգորը
կարում են հակը, իսկ Արիզան մեկ-մեկ տանում
եր բարձում վագոնները:

Ութ ժամ եր գործը—վարոշ դադարներով
հացի ժամանակ: Արտաժամյան առանձին: Դա
մեծ տարբերություն եր Պարսկաստանի տաժա-
նակիր աշխատանքների դիմաց: Ի՞նչ ութ ժամ,
ինչ տասնինդ ժամ: Կյանքի կեսը յեղել և
դաժանը խոնի բարեկեցության համար, մյուս
կեսն ել արտաժամյա դաժանք՝ վարպեսզի փրկի
եր գժվարին գոյությունը մահի ճանկերից—այն
ել վերջն ելի խանի բարեկեցության համար:

Այստեղ գործն ուրիշ տեսակ եր: Նախ՝ նա
դաժանը չեր—այլ աշխատանք: Ապա և այդ
գործը նրան բարեկամ եր և վոչ այնպիսի զա-
ժան թշնամի, վոր լլկում ե, ծեծում, հյուծում,
տանում գերեզման:

Արդուլն հետեւմ ե բամբակի կյանքին:
Այտ նա չփախներով բերվում, թափում ե գոր-
ծարանի բակը: Այստեղից գործարանի մի ծայ-
րում ծծող մեքենան քաշում ե բամբակը գեպի
ջին մեքենաները, վորոնք բամբակը զատում են
սերմից: Սերմը զնում ե ներքն, իսկ բամբակն
աւրիշ բաժին, ուր մամլում ե, հակ դառնում՝
պատրաստ՝ վագոնները բարձրելու:

Թիզան ու մի ուրիշ բանվոր բամբակի հա-
կերը կըում են հա կըում վագոնները, որանք
ել առնում են կենինական, Մոսկավա-

Գռուսմ են մեքենաները ջիների բաժնում,
շղրդում: Բանվորները մեքենաների շուրջը
պատում են գալիս շարունակ, մի բան զրտում,
առուզում: Նրանք միշտ լարված են, մի քիչ,
պբղոված, վիշտ:

Սկզբում այնպես թվաց Արդուլին, վոր
բանվորներն իրար չեն սիրում: Նրանք վիճում
եյին, կովում իրար հետ, խոռվում, յերբեմն ել
գոռում իրար վրա, կոպիտ խոսքեր ասում—բայց
զգում եր, վոր նրանք ելի ինչ վոր հաշտ են,

սիրում են իրար։ Գլխավորը՝ հարազատ են իրար։ Կան ծույլեր, գործալիքներ, սիմուլյանտներ—սրանցից մեկին հեռացըին գործից։ Դրանց շեն սիրում, նախատում են, խրատում, ուղղում։

Մկրտում տարորինակ բաներ շատ կային։ Բանվորները՝ տերության դլուխ—լսել եր Պարսկաստանում, չեր հավատացել, անդամ ծիծաղեք եր վրան—բայց յերբ յեկավ՝ տեսավ վոր իսկապես այս յերկրի շահը, խաներն ու բեգերը ընկել, մնացել են մուշաները։ Յեվ նոր յեկած ժամանակ խորթ ու խեթ եր պահում իրան։ Ի՞նչ գործ ունի սրանց հետ։ Կաշխատի, մի քանի թուման հետ կքցի, կզնա իրա համար տուն Պարսկաստան։

Բայց հետո աննկատելի ընտելացավ—մացալ վոք իրեն խորթ չեր նայում, ինքն ել մուտեցավ։

— Մի վախի, Աբդուլ—թակեց մի որ նրա ուսը ձեթի բաժնից քուսպ հանող Մարդուր ձեթոտ, զվարթ կոմյերիտը—ես ամառ համ ոռնիկդ ե ավելանալու, համ ել գնալու յես մի յերկու շարաթ ման գաս։

Ու ձեթոտ բոռնցքը քսեց Աբդուլի այտին։ Սա բռնեց նրա թեր ու մի հատ կատակով բամբեց գլխին։

Բայց Աբդուլին դուք յեկավ այս հոգատաք

խոսքը։ Յեվ վնրանեղից Աբդուլին ամենքը գիտեն ու առանց իր պահանջի վոնց են հոգում նրա մասին։ Ի՞նչպես ե, վոր հետաքրքիր են, գիտեն վաղորոք, թե յերբ ե գնալու հանգըստյան։

Ժողովներում նրանցից շատերին տեսնում եր Աբդուլը, մենակ չեր խոսել—բայց տես իրեն ուշադրությունից չեն հեռացնում։

Այսպիսի բաներով նրա սիրու աաքանում եր գործարանի վրա։

Ու մնաց, Պարսկաստան դառնալը հետաձգվեց։

Մի ժողովում ել նախակահը դիմեց Աբդուլին։

— Հը, ի՞նչ կասես, ընկեր Աբդուլ, ի՞նչպես անենք, գործից ուշացողներ կան, արտադրությունը տուժում ե։

Աբդուլը մի քիչ շփոթվեց, բայց պատասխանեց։

— Գործից ուշացողը ում ա զսաս բերում—երան Մենք առաջ խանի ու բեգի գործնենք արել ու չենք ուշացել, բա հիմի ամոթ չեմ վոր մեր գործից ուշանանք։

Բանվորները չեյին սպասում այս խոսքը։ Նրանք վոր ժպառում եյին՝ հիմա ազգվեցին, յը չացան։

— Թրուստ ա ասում, Աբգուլը... Ամոթ,
խայտառակություն ա, պետք ա վերջ արվե
ռւշանալուն:

Յեվ Աբգուլը, վոր դեռ առաջներում զար-
մանում եր արտադրական հանձնաժողովի ընդ-
դայնած խորհրդակցություններից, դրած հար-
ցերից՝ կամաց-կամաց սովորեց, վոր—ել ուրիշ
ինչ կերպ պիտի լինի, —գործարանը ուրիշ տեք
չունի, տերերը իրենք են, իրենք ել պիտի հո-
գան նրա մասին:

Սովորեց նաև վոր այստեղ վոչ վոք սեփա-
կան գործ չունի, վոր սենակ հոգաւ: Այստեղ
բոլորը պիտի հողան, Դա անչափ հեշտ ե—վոր-
տեղից վարտեղ... Յեվ հետո՝ այստեղ վոչ վոք
այնպես անտեր չի գործի մեջ, ինչոք Պարս-
կաստանում, ուր՝ չոքեցի՞ր գործի մեջ, ըն-
կար—վերջու ե, մեռիր: Ահա Պարսկաստանը:

Այստեղ ամբողջ գործարանը՝ բաժրակի-
րամնից մինչև ձեթի, սապոնի բաժինները,
գործարանի բակը ուրիշ մասերով մի ընտանիք
ե: Աբգուլն իրեն զգում ե մի մեծ տան գործի
մեջ, ինքն ել այդ տան անդամը, ուր կաշխա-
տի, կապրի, կստանա իր բաժին կյանքը: Միայն
թե լավ աշխատի: Յեվ Աբգուլն աշխատում եւ
ի՞նչպես չաշխատի: Սա ել հո խանի կալվածքը
չե, այն կալվածքը, վոր հղիացնելով խանին

սովամման եր անում մշակներին: Յեվ Աբգուլը
նոր հասկացավ, վոր ինքը այս յերկրում վոչ
թե ոտար չե, այլ և շատ բնիկներից ավելի հա-
րազատ ե:

Բայց սրանում նա համոզվում եր այն ո-
րերին, յերբ մասնակցում եր մի քաղաքական
շույցի, բողոքի, տոնակատարության: Այստեղ
Աբգուլը նկատում եր շատ ուրիշ բաներ: Վոր
այս իրար հետ զգուզ անող բանվորները շատ
են կուռ միացած, նրանք կանգնած են դրոյ
թշնամու գեմ՝ իր լսած Անգլիայի, Ֆրանսիայի
շաների, խաների ու հարուստների գեմ:

Աբգուլը պարզ տեսնում եր, վոր այս իր
գործարանը կապված ե քաղաքի մյուս գործա-
րանների հետ, քաղաքինը մյուս քաղաքնի հետ
և բոլորի աշխատանքի արդյունքը մանր գետե-
րի պիս հոսում, լցվում ե մի մեծ արդյունքի
ծովի մեջ և այդ ծովը պըռիետարական պետու-
թյունն ե:

Այդ ցույցերի ժամանակ Աբգուլն զգում ե,
վոր միլիոնավոր ձեռքեր բոնել են իրեն, բարձ-
րացնում: Աբգուլն ել չի ընկնի, Աբգուլն ել
մենակ չե:

Յեվ արդեն անցնում են մի քանի տարի—
Աբգուլը դեռ չի վերադառնում հայրենիք: Աւ
միտք ել չունի կարծես:

Մի գիշեր Արդուլը զարթնեց անսովոր ձայներից։ Դլուխը բարձրացրեց բարձի վրայից, ականջ դրեց։ Ողի մեջ, բարձրում անհանգիստ, գանգատավոր ձայներով կռում եյին կռունկները։

— Կոլու, կոնւ...

Այսինքն գարունն յեկավ։

Այնպես անուշ եր այդ գանգատավորությունը Արդուլի համար, վոր նա լցվեց ու մրմնջաց։

— Զան, զան...

Յեկ իսկույն ջինջ պատկերացրեց իր հայրենի գյուղը, ահա կարծես մտավ իրենց փողոցը, ահա բաց ե անում տան դուռը։

Սիրաը մղկտաց։ Արդուլը չքնեց այդ գիշեր։ Այնուհետև քանի գարունը լցվեց Յերկանի այգիներում, քանի փթթեցին ծառերն ու ծաղիկները։ Արդուլն սկսեց հաճախ հիշել իր հայրենի տունը, գյուղը։

Հիմի այնտեղ ծաղկում են այգիները, յերկնակապուտի մեջ կրակների պես պլազում են վասկեշող ծիրանները, թափուտներում ծիծառում աղբյուրները և տերենների ու վարդերի աքանքներում սահում նազելի դիմքեր։

Գնա արդյոք այնտեղ։ Բայց իրեն ինչ այդ բոլորից։ Այն այգիների և վոչ մի վարդը, և

վոչ մի բուռ անկյունը, և վոչ մի ժպիտը իրենը չեւ։

Իրենն ե միայն հողե յերկար պարիսպներից շատ դենը փշե դաշտի մեջ յերկու հողաթումբ, վորի տակ քնած ե իր գեռափթիթ ֆաթման, իր տասներկու տարեկան Քյարամի հետ Յերկունն ել սովից բարակեցին, մոմի պես հալվեցին, մինչև վոր մահը փչեց նրանց վրա և յերկու վտիտ լույսերի պես մարեց։ Դա այն գաժան տարին եր, յերբ մի կողմից խանը ցորենը հավաքում եր ամբարում, մյուս կողմից առվալուկ ժողովուրդը կոտորվում եր վորոցներում, պատերի տակ, սողալով տներից դուրս, վոր ներսը չմեռնի անողնական։ Յեկ Արդուլի վոչ մի բարեկամը, վոչ մի հարազատը չփրկվեց մահից։ Նա միայն փրկվեց՝ փախչելով գյուղից, յերբ թաղել եր արդեն իր կնոջն ու վորդուն։

Ու քանի Արդուլը սովորեց, ընտելացավ գործարանի կյանքին, քանի թեթեացավ նրա վիճակը, կարծես դուրս յեկավ խոտագաժան, տատասկոտ անապատից՝ այնքան ավելի խորացավ նրա սրտում այս վերքը—սովաման կինն ու վորդին։

Դադարի ժամերին, յերբ նստում եր հաց ուտելու սկսում եր մտածել, վոր այդ հացի մի յերկու պատառը կարող եյին փրկել նրանց

Կյանքը։ Ահա, ճենց վոր նրանք մեռան սովից—
գտնվեց նրանց փրկությունը։ Հիմա հայն ել
կա, մարդկությունն ել կա։ Յեզ յերբ հացն ել
կա ու մարդկությունն ել՝ չկա վոչ Թաթման,
չկա Քյարամը, յեղնիկի խոշոր աչքերով թախ-
ծալի Քյարամը։

Արդուլի սիրալ ծակում ե մի խորին, թա-
խիծ—ե նո վեր և թոշում։

Երգեն իսկ զործի ել ժամ ե։

Դանդ, դրանդ, զղբում են մեքենաները,
փոկերը շաշում վեր սողում սլացիկ ոձերի նման։

Ներսը ջիների շուրջը պտտում են Արդու-
լի ընկերները՝ Գրիգորը, Սիսակը, Արտաշը, Հայ-
քոն։ Նրանք աշխատում են։ Արդուլն ել։

Բայց ավելի վճռական ոիթմով, հուժկու և
հաղթական աշխատում ե մեքենան։

— Դանդ, դրանդ...

Արդուլը մտածում ել մտածում և սկսում
յերգել։ Յերգում ե խզիզացող ձայնով։ Նրա
յերգը նման ե վիրավոր կունկի, վոր կոլնկում
ե գանգատավոր շեշտերով։ Կարծես այդ յերգը
պոկվելով Արդուլի սրտից՝ կարատում ե իր բու-
նը և նրանով թաթախված, արյունոտ թոշում
ողի մեջ։

Տիուր ե այդ յերգը հին դարերի նման։
Դա Պարսկաստանն ե—կուտակված վիշտ։

Յերգում ե Արդուլը և ձայնը խառնում մե-
քենաներին։

Դանդ, դրանդ—զլում ե, կատաղում մեքե-
նան, խլացնում Արդուլին։ Կարծես չի ուղում
լսել նրան, կանանավոր, հաշված, հուժկու դղըր-
դոցով ուստառմ ե Արդուլին, ստիպում աշխա-
տել, լարվել, լայրաբել, յերգել ուրիշ յերգ—
պայցարի ու հաղթության հավերժական յերգը։

Յեզ Արդուլը տարվելով այդ զղբոցին՝
լրում ե ու սկսում ե ճիգ թափել։ Հետո մոռա-
նում ե։

Մի որ ինչ վոր բանի համար գնացել եր-
վարչության գրասենյակը։ Այնտեղ նրան մի
տաս ըոպե պահեցին։

Հանկարծ մի հարայ լսվեց գործարանի բա-
կից։ Սուլիչը գոռնաց ժանդու ձայնով։ Զարս-
գուշակ ազդանշան։

Արդուլը դուրս թռավ գրասենյակից և վա-
զեց գործարանի բակը։

Բամբակի մամուլ բաժինն այրվում եր։ Ար-
դուլը շանթահարվեց—իր բաժինը։ Ել բան չընի-
շեց՝ թռավ։

Ծուխը դուրս եր վազում գոներից ու պա-
տուհաններից՝ ու յերկար մորուքը դուք

Քաշելով այնտեղից: Իսկ ներսից դաժանաժպիտ նայում եր բոցը: Նրա շեկ թևերի մեջ խլքում եյին բանվորների սիլուետները, վոր փակվել եյին բամբակի հակերի ու կույտերի հետեւ:

Վատանդը մեծ եր և սպառնում եր վոչ միայն գործարանին, այլ և անմիջապես այն բանվորներին, վոր ներսն եյին մնացել փակվել բամբակների կույտերի մեջ: Հայտնի չե մնացել եյին հանգնելու թե արգելվել եյին այնտեղ:

Բանվորները կատաղի ողակով բռնեցին շենքի մուտքը: Նրանք շփոթված ու զայրացած՝ քլունդներով, բահերով հարձակվեցին հրդեհի վրա: Դա մի կատաղի հարձակում եր թշնամու վրա:
 — Ո՞վ ե ներսը... Ո՞վ ե ներսը?
 — Գրիգորն ե, Միկան, Ահմադը...
 — Դե պրծեք, շնւտ, շնւտ, — գորգոռացին նրանք ու վազեցին ներս:

Բայց բոցերը լիզեցին նրանց, և նրանք ընկըրկեցին:

Հանկարծ Աբդուլը մի ջվալով դեմքը վահանած ներս քցեց իրան: Բանվորները միաբերան գոռացին, բամբակի ծանր ծուխը իսկույն կլանեց նրան ու բոցերն սկսեցին համբուրել նրա դեմքը: Նա կորավ հակերի յետեւ: Հանկարծ ցավից ծղրտաց, ջվալը կպցը գեմքին ու թռավ բանվորներից մեկի՝ Գրիգորի վրա, վոր բամ-

բակի ծխից խեղդված, իրեն կորցը ել՝ դեմ դեն եր զարկվում թռչունի նման: Նա ըստ յերեսույթին խեղդվում եր: Աբդուլը խլեց նրա թիզ և սկսեց գերազույն ճիգով քաշել նրան հակերի արանքից: Նա վոչինչ չեր լսում, չեր մտածում: Միայն մի բնազդական ուժ նրան մղում եր դեպի դռւոր: Հանկարծ վոտը դեմ առավ մի հակի և նա վայր ընկավ: Գրիգորը խելահեղ բռթեց նրան և իրեն քցեց դրան մոտ: Բանվորները դուրս քաշեցին նրան:

— Աչդուլը, Աբդուլ...

— Շնուտ, հասեք...

Գորգոռոցը սաստկացավ: Յեվ այդ ըռպետին, յերբ բանվորները ներս եյին վաղում և դուրս թռչում կրկին՝ կոմյերիտ Մարգարը կատաղի, վայրենի մի շարժումով, վոր նման ըռպեներին ե միայն պատահում՝ թռավ ներս ու հարձակվեց Աբդուլի վրա, վոր դեմքն աշխատելով թափցնել հակերի արանքներում պարզապես կորցը եր իրան: Ըստ յերեսույթին նա վընտում եր Ահմադին ու Ռիզային: Մարգարը ընշելով բամբակի ծուխը և այրվածքներ ստանալով զգաց, վոր նրանք արգեն այրված են: Հարձակվեց Աբդուլի վրա, խլեց նրա վոտը և սատիկ թափով քաշեց դուրս:

— Տղերք, շանգները, շնուտ, այրվեցին՝ գոռում եյին բանվորները:

Արդեն հըշեջ հեղուկներն ու շանզներն սկսեցին հանգցնել հրդեհը։ Բանվորները քիչ-քիչ ներս խուժեցին՝ հաղթահարելով հրդեհին։ Բայց նրանք ուշացել եյին։ Ահմաղն ու Ռիզան այրվեցին։ Ու մեծ դժվարությումբ հանգցրած հրդեհը չքանալով՝ թողեց իր ահուիի հետքը—ծխացող, թեժ առաստաղն ու հատակը, բաժ-քակի սևամոխիր հակերը, վօրոնց մեջ թաղված մխում եյին Ահմաղի ու Ռիզայի սև դիակները։

Յերբ փաթաթում եյին Արդուիի այրվածք-ները՝ նա ավելի ընկերների ցավից եր ծղրտում քան դեմքի ու ձեռների վերքից։

Վիրավորներին՝ Մարգարին և մի քանի բան-պորների բաց թողին ամբուլատորիայից՝ պատ-պիրելով ամեն որ այցելեր, իսկ Գրիգորին ու Արդուին դրին հիվանդանոց։

Գրիգորի այրվածքները ծանր եյին։ Պակաս չեք և Արդուինը։ Նրանք դեռ յերկար պիտի պառկեյին։

Արդուիը ապաքինման մասին չեք մտածում։ Նրան տանջում եյին Ահմաղի ու Ռիզայի սևա-ցած գիւղների պատկերը։ Ու յերբ տխուր, պարապ, անկողնում պառկած նա մտածում եր նրանց մասին, զգում եր, վոր իր հին վիշար՝ Թաթման ու Քյարամը՝ իրենց մոմեղեն դեմքե-բով ու յեղնիկի թախծոտ աչքերով՝ ընկղմեց

ավելի խորը, նրա վրա, նրա տեղ դրվեց նոր, ուժեղ մի վիշտ՝ Ահմաղն ու Ռիզան։

Միակ միաթարությունը իր կողքին պառ-կած Գրիգորն եր, վորը թեև տնօում եր, բայց կյանքի եր գալիս «Եհ», կյանք եր, ազատեցիւ-մտածում եր Արդուիը։ Ու մի որ ել հարց ծա-գեց իր մեջ թե ինչ գործ ուներ Գրիգորը մա-մուլ-բաժնում, յերբ նա ջին մեքենաների վրա յե բանում։ Այս միաքը կայծակի նման լուսա-վարեց Արդուիի աչքում մի ուրիշ բան, վոր նա չեր տեսել մինչ այդ։

— Արա, զու ինչ բան ունեյիր մեր բամ-քակների մեջ, — հարցրեց Արդուիը Գրիգորին։

— Դուսցներն իմացա՝ թռա ու...

— Հա, եղակն... լեզուն կծեց Արդուիը և լուց։

Ապա հառաչեց հանգիստ ու խաղաղ և խանդաղատանքով մտիկ տվեց Գրիգորին։

Նրա սիրտը թեթևացած եր արդեն։



Յերբ կենտրոնից առաջին ներկայացուցիչներն յեկան դյուղ այնտեղի սակավաթիվ բայլշնիկների հետ կազմելու գյուղի հեղկոմը՝ նըրանց դիմավորող յերիտասարդների մեջ ամենից առաջ կանգնած եր նաև ծերուկ Մերկեն։

Մերկեն չքավոր անզավակ գյուղացի եր, ապրում եր իր պառավի հետո։ Նիհար, ճիլոմարդ եր, փորը մեջքին կպած, բայց նիզակի պիս պինդ, ճկուն։ Մի բանում միայն աչքի եր ընկնում շատ—արտակարգ ուրախ եր ու ժիր։

Ինչի՞ գնաց դիմավորելու, արդյոք ինչ եր սպասում նա բայլշնիկներից—ինքն ել չգիտեր։

Յեկ մտքօվն ել շեր անցնում պատկերացնելու թե ինչ պիտի լիներ այն նոր կյանքը, վոր բերում եյին նրան։

Թե քաղաքից յեկածները և թե դիմավորող գյուղացիները ուշ չդարձրին Մերկեյի վրաւ թե, գլուխը խառն ժամանակ՝ ով պիտի զբաղվեր մի ծերուկով, վորին յերիտասարդները տա-

բորինակ մարդ եյին համարում, իսկ ծերերն ասում եյին։

— Ցնդած ա։

Ու բանի տեղ չդրին նրան, վոչ ել նրա արթնացած հետաքրքրության, վորով նա առաջին որերը աչքերը լայն բացած գնում եր հեղկոմի շենքի կրղմը և կոմիկ ժպիտով դիտում թե ինչ են անում, կամ յերբ գնում նստում եր առաջին ժողովներում ու միտինդներում ու ականջները սրած ունկնդրում խոսողներին։

Մերկեն շատ եր գնացել քաղաք իր հավերից մի յերկուսին ծախելու, բան ման առնելու տան կարիքների համար։ Հագար անդամ անցել եր քաղաքի շնորերի մոտով, ակումքի, դպրոցների, ցիրկի, թատրոնի պատուհանների տակից, տեսել եր բուլվարում լրագիր կարդացողների, նայել ե աֆիշաներին, տեսել հագար ու մի քեֆ, զվարճություն, տնտղել և մակազինների վիարիններին դրած տարորինակ իրերը։ Բայց այդքան ժամանակ—իր ամբողջ կյանքը—մտնելով քաղաք, յերբեք, — բայց յերբեք—մի որ, մի ժամ նրա մտքով չի անցել թե դրանից մի փոքրիկ մաս, թատրոնի, կինոյի մի տեսարան, լըրագրից մի լուսը, ակումքից մի վորեե զվարձալի բան և վերջապես զպրոցից մի տառ իրեն կարող ե հասնել։



Զարմանալի բան։ Մի բոպե չի հարցրել
թե ինչ են զրանք, մտքովն անդամ չի անցել,
վոր դրանցից ինքն ել կարող ե բաժին ունենալ։
Կատարյալ անդիտություն։

Վճռ իրենց գյուղում գպըռց ե յեղել, վոչ
ել ուսումնական մարդ ե նայել այն կողմը։
Գյուղ եր իր համար—վոնց վոր դրած եր վայրի
դաշտում՝ այնպիս ել մնացել վայրի, կորած,
իր բախտին։ Մարդիկ ծնվում, ապրում, մեռ-
նում—ահա յերեք գեպք, վորով բազմազանվում
եր այդ գյուղի կյանքը։

Մերկեն շատ եր սիրում հեքիաթ ասողնե-
րին։ Ողայի, գոմի ջերմեռանդ այցելու՝ սիրում
եր լսել սիստը գլխանի դեերի, ջոջի պառավնե-
րի, մութ ու լուս աշխարհների հեքիաթները։
Բայց և սիրում եր հարցնել գիտակ ծերունինե-
րին թե ինչ ե աշխարհը, լուսինը, աստղերը։
Արդյոք կանաչը վոր բննում ե՝ յերկրի քաշը
պակասում ե թե ավելանում...

Բայց այդ գոմերից ու ոդաներից դուրս
ինքն եր ու իր կյանքը՝ մենակ, անուրախ, մոխ-
րագույն, չքափոր։

Ցեփ Մերկեն չեր մտածում թե արդյոք կա
մի տյլ կյանք, կլինի՞ իր համար նոր կյանք,
կտեսնի՞ վորեն նոր բան, թե այնպիս ել կմեռ։

նի, ինչպիս իր պապերը, ապուպապերը, ինչ-
պիս իր շրջապատի գյուղացիք։

Ահա թե ինչն, յերբ նա լսեց վոր քաղա-
քից մարդիկ պիտի գան հեղկում կազմելու՝ գուբա
թուավ առնից դիմափորելու։

Երան յեկողներից վոչ վոր չնկատեց, բայց
նա նկատեց բալորին և սկսեց անվրեպ հետեւել
թե ինչ են անելու նոր մարդիկ։

Նոր մարդիկ չքափոր գյուղացի յերիտա-
սարդներին առաջ քաշեցին և սկսեցին նոր
կյանքի հիմը դնել։

Մերկեն հետեւեց, հետեւեց և հանկարծ զարթ-
նեց։ Թունդ կպավ Խորհրդային Իշխանության։
Հասարակական վորեն ժողով լիներ՝ առաջին
ժողովականը նա եր։ Ներկայացում դրվեր՝ զեռ
մի ժամ առաջ Մերկեն կանկիեր ոդայի դրան։
Ընտրական պայքարներին Մերկեն մինչև բուկը
խրված՝ լողում եր միջին։

Ցեվ ուրախ եր, ծէծաղում։ Մարդ կմեռ-
ներ գյուղում, կպատահեր վոր լուրը կբերեցին
Մերկեյին։

— Մերկեն, ախք Սոսոլը մեռավ, և, խեղճը։
— Ի՞նչ անեմ. սաղ ըլեմ յես, գու, խալխը։
Մեռավ՝ կթաղենք։

Բայց ամենից շատ սիրում եր, վոր գյու-
ղում մի նոր բան եյին սկսում։ Ի՞նչ կուզի՞ լի-

նի. թեկուզ ծառատունկի որ: Կզնար իր բահով
պիոներների հետ կփոքեր, տնկիները կտնկեր,
կերգեր, անեկղոսներ կպատմեր: Պիոներները
կծիծաղեցին: Պատահում եր նրանցից վոմանք
ել ձեռ կառնեցին Մերկեցին: Չեր նեղանա:

— Ե, ի՞նչ անենք. ջահել են, վնաս չունի:
ի՞նչս պակասեց:

Խրճիթ ընթերցարանի անխուսափելի հաճա-
խորդն եր: Յերբ կարդում եյին՝ խորին ուշա-
դրությամբ կապույտ, պստպատան աչքերը կտրն-
կեր ընթերցողի աչքերին և այնպես կենդանի,
զմայլանքով կլսեր չինական, հնդկական, ավրո-
տրիալական բանվորների գործադուլների, քա-
ղաքացիական կոփմսերի մասին, այնպես վառ
տպավորությամբ կհամակվեր այդ ամենով՝ կար-
ծես այդ բոլորը կատարվում ե իրենց գյուղում:

— Ի՞նչ ա ասում... Զան. Չո. Լի՞նը... Վայ,
շուն շան վորդի. Հետոն...

Հետո ուրիշ մի լուր կզար կինոյի արա-
գությամբ բաց կաներ մի ուրիշ պատկեր.—
Անգիական ածխահատների գործադուլը: Միե-
նույն ե, դա ել հետաքրքիր ե, կենսալից, զար-
մանալի: Յեվ Մերկեն.

— Կհաղթեն. չե՞— հարցնում եր սրտատրով
խրճիթվար Մադոյանին, վորը բարձոք եր հա-
մարում հանգստացնել նրան.

— Հա, իհարկե:

Մերկեյի գրդմամբ շատ բան եր կարդաց-
վում խրճիթում. նրա պատճառով գյուղացիք
հաճախ ստիպված եյին իրենց գյուղի շարքացա-
նի, արաքտորի, և այլ խնդիրներից դուրս գտ
ել լսել նաև աշխարհիս յերեսին պատահած շատ
դեպքերի մասին:

Մերկեն գյուղի անհանգիստ տարբն եր:

Տեսնես ի՞նչ եր յերեակայում աշխարհի
մասին, ի՞նչպես եր աշխարհը և հիմա ի՞նչ եր
զգում, վոր այդքան ագահությամբ վրա եր ըն-
կել իմանալու, անվերջ տեսնելու, հասկանալու:
Կարծես ուղղակի գանձ եր բացվել նրա առաջ,
և նա շլացած, ազահ նայում եր ու քանդում,
քանդում:

Նա հարց եր տալիս լուսնի խավարժան,
յերկրագնդի շարժումների, գարնան, ձմեռվա,
բույսերի, ուրիշ յերկրների մարդկանց մասին:
Յեվ խրճիթվար Մադոյանը ինքն ել վարակվեց
այդ ծարավի մարդու խուզարկու մաքով, սկսեց
հաճուք զգալ բացատրելում, խոսելում:

Գյուղացիք վոր առաջ հորանջում եյին, յեր-
քեմն ել տրտնջում՝ հիմա իրենք ել մի առան-
ձին ճաշակ առան գիտելիքներից:

Մի որ ել լիկայան գնաց տեսնելու թե
մոնց են պարապում:

— Հը՛, Մերկե, կուզե՞ս գրագետ դառնաս, —
հարցըեց Մադոյանը կատակով:

— Հեշտ ա, կըլի:

— Դժվար չի: Ուզնւմ ես՝ նստի տեսունաց, դիտեց՝ ինչպես են հասակավորները գիրկապ անում: Հարցըեց վոնց են կարդում, իմացավ վոր բավական շատ տառեր պիտի ճանաչի, վոր կարգա:

— Լավ, ասաց, —մի ենպես քյասա ձև չկա, յերկու-յերեք տառով կարդանք:

Չե, չկար դժբախտաբար «քյասա» ձեւը, Հետ կացավ մեծ ափսոսանքով:

Անձնական կյանք չուներ Մերկեն:

Տունը, իր պառավը, իր արտը, վոր կիսրաբով ցանում եր մի լծկանատերի հետ—նրան չեք գրավում:

Նա դրսի մարդ եր: Գեղամիջի, հասարակության: Այրվում եր ցանկությամբ՝ գործ անել, ողնել—բայց վոչ ուսում ուներ, վոչ հասակ... Նա ել ուժ եր տալիս ուրիշներին խրախուսելու, առաջ մղելու: Դա եր նրա գործը: Յեվ քիչ բան չեր: Քմնիսներին նա համոզեց բերեց լիկայան, գրագետ դարձնել տվեց, համոզեց ժողովներին հաճախել, լսել, իմանալ, սովորել:

— Թող բան սովորեն, մեզ պես մութ չմնան:

Իսկ յերբ մի հրահանգիչ, մի ուսուցիչ, մի կոմյերիտ ճառ եր ասում, յերկաթ բարակ ունկընդիրներին ման ածում և չեր գտնում բացատրության խոսքը, բանաձեղ, —ասենք՝ մի մասսի մասին՝ Մերկեն թրի պես կտրում եր.

— Մինչև սելը չշրջի՝ ճամբեն չի դրսովի:

Կամ յերբ մեկը զեղծում եր արել և գյուղացիք խոսք եյին անում կոռպեղատիվը փակել՝ Մերկեն բանաձեռում եր.

— Մի լվի համար կարպետը չեն վասի:

Ժողովը կենդանանում եր, և վճիռը կայցվում:

Յերբեմն ել ձանձրալի եր նա—իր անվերջ հարցասիրությամբ, իր միամիտ ցանկությամբ ամեն բան իմանալի Այնպես վոր Մադոյանը շատ անգամ ել կարճ եր կապում, անդամ ջղայնանում:

Յեվ շատ քչերն եյին մտնում նրա հոգին—տգետ, դարերով չորացրած հոգին, վոր անպատի պես ծարավի եր մտավոր ցողի, Խավար գրի մեջ փակված այդ կենդանի միտքը այսոր տեսել եր պատառվածքը մի նոր առավոտի և մզվում եր դուրս, դուրս, արևերես:

Յեկ նրան կոպտաբար յերբեմն կշտամբում եյին.

— Ե՞, դե զահլա տարար:

Լոռում եր: Յեկ ժպտում: Վոչինչ, կտսեն՝ կանցնի:

Մի անգամ նստած եր քարին և մտիկ եր տալիս մարդագետնի վրա մարդանքներ անող պիոներներին: Մոտ յեկան մի քանի գյուղացիներ, նստեցին:

Մերկեն թախծալի ձայնով հանկարծ հառաչեց.

— Լավ բաներ կան, ե, լավ բաներ:

Գյուղացիք նայեցին նրան մի քիչ հեգնությամբ:

— Դու ել ի՞նչ ես գլուխդ կորցրել, տնաշեն, հանդիմանեց մի յերիտասարդ գյուղացի—եղ լավ բաները հո նոր չեն: Վարժապետին հարցրու, ասում ա՝ Ամերիկա մի ամսում քաղաք են շինում, միջին ապրում, հետո քանդում տանում ուրիշ տեղ: Եղ լավ բաները վաղուց են յեղել:

Մերկեն գլուխը տիպուր որորեց.

— Ի՞նչ ես ասում... եղել են... շատ ել: Բայց այշի, մեզնից ով եր տեսել խրճիթ, գիր, ուսում, թատրոն, շարքացան, տրաքտոր... ես

ուղիոն, ես հբաշքները: Մեզնից ում են ցույց տվել, յերբ են մարդատեղ դրել:

Ու հառաջում ե՝ աչքերը տիպուր հեռուն քցելով.

— Գնում ես խալխի մեջ՝ բան են ասում, բան են անում: Աշխարք չըաղդանի պես վառել են ու են, մեջին հազար հբաշքներ են շանց տալիս: Երազում չտեսածներս տեսանք:

Մերկեյի աչքերը վառվում են յերազով լի:

Հետո նորից կրակվելով՝ գլուխը թափ տվեց.

— Ե՛Ե, ափսոս... լավ բաներ արին, շատ լավ բաներ արին, մենակ մի բանում սխալ վեցին:

— Սխալվեցին,—հետաքրքիր մտիկ տվին կոմյերիտները...

— Բա, մի բանում սխալվեցին, վոր ուշ արին:

— Ի՞նչն ա ուշ, ի՞նչ ես ասում:

— Բա ի՞նչ ա ուշ չի...

Ու ել չի նայում խոսակիցներին, վոր տեսնի թե ինչպես են ժպտում իր այդ խոսքերի վրա. Առարկում են, բայց հուզված ե, չի լսում: Այդ միտքը մեխի պես ցցված ե զլիսի մեջ:

Ու տիպուր մահուտ աչքերը հեռուները քցած՝ կը կնեց.

— Շատ ուշացան, շատ ուշացան, շատ, ե...
Շնոր պտի սկսելին:

Մի աշնան յերեկո Մերկեն մեռավ: Մեռավ
ամենահասարակ կերպով: Միայն մի զարմանա-
լի բան պատահեց, նրան թաղելու յեկան պիո-
ներներն ու կոմյերիտները: Թաղեցին քաղա-
քացիական կարգով:

Բավական ել ծիծաղեցին՝ կը կնելով իր խոս-
քերը.

— Մեռավ՝ մեռավ, յես սաղ ըլեմ, դուք
սաղ ըլեք:

Հետո հէշեցին նրա խոսքը՝ «Ուշացան,
շատ ուշացան»: Ծիծաղեցին բավական,

Այո, Մերկեն չեր նկատել վոր աշխարհը
լցվում ե նոր կյանքերով, վորոնց համար իսկի
ել ուշ չեր, ու գեռ շատ ծիլեր կան, վորոնց
համար դեռ շատ վաղ ե...

Ի Ռ Ե Ր

Հրանտն ուրախ վերադարձավ ամարանո-
ցեց:

Աշնանամտի այն ուրախությունը, յերբ
«կյանքն սկսվում ե»: Հով սեպահմբերը, կազ-
դուրիչ զովը և աշխատալից հետաքրքիր ձմեռը,
վոր սպասում են մարդու:

Ամարանոցում վատ չեր. մինչև անդամ
շատ ուրախ եր: Ամբողջ ամիս ու կեսը զեղեցիկ
նվազի պես անցավ Դիլիջանի գողարիկ անտառ-
ներում, ուր իր նման ուսանող կոմյերիտ ըն-
կերների հետ, ծառերի տակ, անտառի բացատ-
ներում վազվում ու թոշկոտում ելին իենթ
նժույգների պես, կամ բորբոքված վիճում հա-
մալսարանի, քաղաքի կյանքի ե... ամբողջ աշ-
խարի մասին:

Մի բան միայն ամարանոցում վատ եք:
Զեյին թողնում ընթերցանությամբ պարապել
վոր Հրանտի մասնավոր կրքերից մինն ե: Բայց
յերբ ինքն ել արանք եր գտնում առանձնանա-
լու մի ծառի տակ՝ անտառն այնպես եր նրան
որորում, վոր քնում եր գրքի վրա:

Հերջապես բնությամբ հարբեց, հավեցավ
և վերջը ձանձռույթ զգաց: Քաղաքը քաշում եր:

Հրանտը ճամբին պատկերացնում եր զա-
լիք աշունն ու ձմեռը: Աշխատանքը համալսա-
րանում, բջիջում, շեֆարկյալ գյուղում, հան-
րային գրադարանում և այս բոլորի հետ իր սի-
րած գրքերը՝ տանը... Հետո վերջապես այնպի-
սի բաներ, վոր ինքն ել չգիտեր թե ինչ, բայց
վորը միշտ հեռուներից ձեռով և անում, կան-
չում—վոսկեղենիկ ապագան մի յերիտասարդի,
վորին նա քաշում և մշտահույզ ծովի նման:

Հրանտին միշտ այնպես ե թվացել, վոր
ինքը քիչ ե աշխատում: Միշտ թվացել ե, վոր
աշխարհը լի յե այնքան ձգտումներով, պարտա-
կանությամբ, կատարելագործությամբ, հրաշք-
ներով, յեռ ու գեռով, և ինքը վոչինչ, դեռ վո-
չինչ չի արել, յետ ե մացել:

Հենց վոր քըոջ հետ կառքից իջան, մտան
տուն՝ Հրանտն ասաց.

— Դե, շնոր, շնոր, սենյակը մաքրի, սար-
քի յես սկսում եմ աշխատանքներս:

— Սրբի ասիր ու պրծար, — մտահոգեց քույ-
ըը—աշխարք գործ կա, տունը պիտի դուրս
թափեմ:

Հետեյալ առավոտ սկսվեց սենյակների
«դուրս թափելը»:

Հրանտը գնաց համալսարան, ակումբ փո-
ղոց, տեսնվեց ընկերների հետ, շրջեց, յեկավ
տուն:

— Դեռ չես պրծել:
— Պըճնել, — հեգնեց քույրը բարկությամբ,
— փոշին աչք ու յերես ե ուտում:

Յեվ զլուխը կոխելով թախտի տակ՝ շարու-
նակեց դուրս ածել իրերը: Հրանտը նստեց պա-
տուհանի մոտ, վերցրեց «Նախադարյան կուլ-
տուրան» և սկսեց կարդալ:

Քույրը մոլեգին աշխատում եր և ինքն ի-
րեն քըթմնջում: Դա մի չոր ու ցամաք հասա-
կավոր կին ե, բարի, մշտաշարժ, խստակեմբ
Բաղուկները շոգեկառքի թերերի պիս անդադար
շարժման մեջ եյին: Ավլում եր, որբում, վերց-
նում, դնում, նա իր ամբողջ կյանքը նվիրել ե
Հրանտի կյանքի ծառայության: Նրա շնորհիվ ե
Հրանտը տան հոգսից տպատ՝ դրսի կյանքին նը-
փիրվել:

Սենյակը սակայն այլանդակվել ե: Այնքան
իրեր կան դուրս թափած անկյուններից, տոխ-
տերի տակից, պատուհաններից, վոր շարժվելու
հնար չկա:

Հրանտի քույրը դեռ պեղում, դուս ե ա-
ծում նոր իրեր ու ինքը մեջը թաղվում:

Յեվ վորաեղից ել այսքան իրերը հավաք-

վել՝ մնում են Հրանտի տանը։ Ու ինչ անհաշիվ քանակ ու տեսակօվ, պետքական կահ ու ամանեղեն ե մոռացված, խորթ իրերի հետ լցվել միատեղ։

Քայց, — նայում ե Հրանտը — ինչ արարողություն ե սկսել քույրը, ինչպես ե ապրում նա այդ իրերը։ Ինչ ջերմեռանդությամբ ե սարքում իր փոքրիկ խաղաղ տունը։ Նա ուրիշ վոչինչ չի նկատում այս տուփից գուրս։ Անշարժը, անխախտը սա յեւ—իսկ աշխարհը յերկրորդական ե, ուրիշինը, անկարեռ բան։

Նայում ե Հրանտը այդ իրերին, վոր իրենց սովորական զիրքերից դուրս գալով, հետները դուրս են բերել նաև շատ տարորեն, մոռացված իրեր, վոր նրանց սարքված ժամանակ մարդ չի նկատում։

Բզկտված հովանոցը, կարկտանած կոշիկներ, մեխեր, ժանգոտ բանալիներ...։

Հնամենի, ծանը կամողի բաց զզրոցներից դուրս են թափկել հին զրքեր, իր մեռած քրոջ յերեխի հագուստները, կոշիկները։ Լուսանկարներ են փոփել հատակին։ «Հայագիւ» պրիստավ Մելիքովը, բեխերը մինչև տկանջները սրած, թեր դցել ե Հրանտի փեսի վզով։ Հարբած ժամանակ են նկարվել։ Բազմաթիվ հին վաճառականների և այլ «զանազան տեսակ» մարդկանց

արտառոց լուսանկարներ, վորոնց տերերը չկան այլեւ։ Սևացյած կաղնե հավանքը, անատամ պառավ բերնի պես ստվերը մեջը, կողքին ընկած ե ձվածե յուղոտ քարը—հնագարյան գործիքի նման։ Ինչպես այն փոշոտ յերկանքը, վորի վրա տատը կռացած պտտում եր ու կորհու անում։

— Համա մեր տանը խառն ի խունն իրեր կան, — ժպտաց Հրանտը։

— Հապա ինչ, տուն եւ

Տուն... Քարայր ե՝ վոր զնում կորչում ե անցյալի ուղղությամբ, վորի հազար քունջ ու պուճախում թագնված են իրեր, վորոնց կարգը մեր որերից ըռնի զնա մինչև նախամարդը։

Յեվ կարծես այդ իրերին ձեռ ե տվել նախամարդը ու հետո ինքն անհետանալով։ Թողել խավարի մեջ։ Բրածո կենդանիներ են կարծես, վոր անցյալի մթությունից առյերես յելնելով՝ նալցում են անհեթեթ, ծամածում շրթունքներով, և նրանցից բուրում ե մի խորին խոսող հնություն։

Քարայրների հնությունը...։

— Սրանք մի տանեմ արեին փոեմ, հոտը քաշվի—տառում ե Հրանտի քույրը։

Այս, վոիր, — խոսում ե Հրանտը ցրված—քայց ավելի լավ ե՝ կորցրու։

— Ինչո՞ւ:
 — Ինչի՞ յեն պետք: Ի՞նչ պիտի անենք:
 — Ինչ անենքս ի՞նչ եր...: Ափսոս չէ, տուն
 ե, նեղ ընկած տեղը պետք կզա: Անպետք բան
 կա—պնդում ե քույրը՝ ջերմեռանդ սբքելով մի
 հին մոմակալ:

Ու ինքն իրեն խոսում.

— Ասում ես անպետք: Լավ չէր, մայրի-
 կիս սնդուկը նորոգել տվի, հին գրքերդ ու
 տետրակներդ մեջը դրինք: Այ, ես հովանոցը շի-
 նել կտամ, ելի բան ե:

— Դեն դցի, պլաշ ունեմ: Հովանոցը ով
 ե գործ ածում:

— Ի, — ասում ե Հրանտի քույրը և կոտր-
 ված ժպտում՝ թագանելով վիրավորանքը — սա
 Մարոյիս հիշատակն ե:

Մեռած քընջ...

Հրանտը լեզուն կծում ե: Քույրը շատ եր
 սիրում հանդուցյալին, Հրանտն ել իհարկե, և
 հաշվի առնելով քրոջ զգացմունքը, չի ուզում
 վիրավորել: Բայց ինչ բան ե իրի հետ կապել
 ամեն ինչ: Յեվ ինչպես կոչուն բան ե այդ ի-
 րը, ինչ կփչուն ե նաև իր քույրը: Կուռքի պես
 պաշտում ե նորը, մորը, բարեկամներին, ծա-
 նոթներին—նրանց իրերին:

Յեվ շնորհիվ քրոջ կոչուն բնավորության,

այդ բոլոր իրերը մնացել, տեղ են բռնել: Շա-
 տերը արդեն տղեղ՝ են, տիսուր տեսք ունեն,
 տարտամություն են փշում մարդու հոգուն,
 ինչպես ահա այն տատական անճոռնի կամողը:

Այդ իրերը՝ շնորհիվ Հրանտի քրոջ ծիսա-
 կան կենցաղի՝ իրենց հատուկ տեղերն ունեն,
 ու յերբ նրանք կը սարքվեն, կը դրվեն իրենց
 մշտական, անխախտ, որինական տեղերը, վոր
 նա մի անդամ որինել, չսխալվել, այս տառը ի
 յե հաստատել ե, այն ժամանակ նրանք կական
 մտիկ տալ իրենց համառ աչքերով, ինչպես վոր
 տարիներ մտիկ են տվել Հրանտին՝ զնելով ի-
 րենց կնիքը նրա հոգու վրա: Կը շաբանակեն
 տիրել նրան, գամել նրան:

Յեվ ինչ... իրեր կան, վոր Հրանտի քրոջ
 համար ել ավելորդ, անպետք են: Վերջապես
 Հրանտը ինքն ել ունի իր ավելորդ իրերը: Բայց
 նրանք մնացել են ու մնում են: Ծուլություն,
 անփութություն:

— Ինչքան ավելորդ են դրանք և ինչպես
 փշացնում են սենյակի ողը—խոսեց Հրանտը:

«Ինչպես և մեր հոգու սենյակներում ավե-
 լորդ իրեր մնում փշացնում են հոգին»—
 մտածեց Հրանտը և զառնորեն ժպտաց:

Զանձրույթ, սրտնեղություն յեկավ վրան:
 Անցյալի փոշին, մանր, աննկատելի փոշին, ներ-

կա շատ ավելորդ փոշիների հետ խառն, համբ նստել ե նրա վրա՝ ինչպես հայելու վրա, և յերբ նա մատի ծայրը քուում ե վրան՝ փոշին գծեր ե քաշում, գրեր ե գրում:

Սրանեղած ման ե դալիս Հրանտը և արևադարձ չորս կողմը:

Հանկարծ կանգ առավ:

Անկյունում գրած եր իր քահանա պապի գավազանը պղնձե գլխին առաքյալների քանդակով:

— Մա ինչու յես պահել, — բարկացած խոսեց նա:

— Ի՞նչը:

— Գավազան ե ինչ ե: Ինչի՞ յե պետք վոր պահել ես:

— Թող մնա, քեզ ինչ ինձ պետք ե, — ասաց քույրը և մի կողմ քաշեց գավազանը:

— Վ՞չ, դեռը տուր, հարձակվեց Հրանտը և խլեց գավազանը:

— Ի՞նչ պիտի անես — հարցըց քույրը վախեցած:

— Դեն գցեմ:

— Վույ, քոռանամ յես, պապիս հիշատակը...

— Անիծած մեջը, սա ինչ ե, պահել ես, —

գոռաց Հրանտը և գավազանը դնելով ծնկան վրա՝ կոտրեց, տարավ բակը նետեց:

— Ի՞նչ ե անում, ի՞նչ ե անում, — ճշաց քույրը և սարսափած վագեց հետեւից, գնաց բակից բերեց կոտրած գավազանը:

— Վախ, տեսար ինչ արավ, տեսար ինչ վայրենություն արավ, — մղկտաց քույրը և սկսեց լաց լինել:

Հրանտը սկսեց արագ արագ անցուղարձ անելով ծխել:

— Եղանակ ես, միշտ կոպիտ, վայրենի, ի՞նչ եր ուղում քեզնից գավազանը, վաթսուն տարվա հիշատակը:

— Թքանձ մեջը:

— Թուքը յերեսիդ, — ճշաց քույրը գայրացած շեշտով:

— Վերջապես՝ յես չեմ կարող — գոռաց Հրանտը — ընկերներս վոր տեսնեն՝ ի՞նչ կասեն. կը հավատան վոր յես չեմ պահողը:

Այս խոսքերի հետ Հրանտը մոտեցավ մյուս պատուհանին, ուր արկղներ ելին դրած, և հանկարծ նրանց մեջ նկատեց մի նկար, վոր նրան ավելի գայրացրեց:

«Փառք Հայաստանի» նկարը, զարդարված հայ հին թագավորների պատկերներով:

— Սա ինչ բան ե,-գոռաց Հրանտը և դուքս
քաշելով նկարը՝ թափով նետեց դեպի շեմքը:

— Գազան յես կտրել, ինչ ես կատղել,—
հարձակվելով նկարների վրա՝ ճշաց քույրը:

— Գազա՞ն եմ՝ հեռացիր:

— Կը հեռանամ:

— Բաժանվէ՞նք:

— Բաժանվմնք, հիմիկվանից շուտը չկար-
ում ես վախեցնում,—, գոռաց քույրն ու վայր-
դրեց նկարը:

— Թո՛ւ, եսպես կյանքի մեջն ել անիծած,
—ասաց Հրանտն ու գլխարկը խլելով դուքս
թռավ:

«Թող կորչի ուր ուզում ե, կամ յես կը
հեռանամ»—խոսեց ինքն իրեն Հրանտն ու
արագ գնաց փողոցով:

«Ի՞նչ քաղքենիություն, վերջապես ինչ
դառան գլխիս այդ նկարները»:

Հեռանալով մինչև փողոցի ծայրը, կանգ
առափ: Նայեց տան կողմը, վոր տեսնի՝ արդյոք
քույրը դուրս չի գալիս:

Քույրը չեր յերեսում:

«Կոպիտ եր... բայց ինչ անեմ»—մտածեց
Հրանտը:

Նայեց դարձյալ տանը, վոր այժմ ավելի
կծկված, փոքրացած եր յերեսում, ծիծաղելի մի

տուփ, վոր ծփում ե ահոելի ովկիանոսում, վոր
այս աշխարհն ե: Ահա այնտեղ, այդ փոքրիկ
տուփի մեջ այնքան իրեր կային, իրենց պատ-
մությամբ և համառ շանխախտությամբ»:

— Վոչինչ, կը հանգստանա—մտածեց քրոջ
մասին Հրանտը և անցավ մյուս փողոցը:

«Բայց ինչպես անեմ յես ել... յես ել իմ
սկզբունքներն ունեմ»—շարունակեց նա:

Յեկ միաժամանակ զգում եր, վոր ինքն ել
եր հերթին տանը մի «իր» ունի, վորից չի բա-
ժանվում, վորի հետ դեռ յերկար պիտի ապրի
նա, վորքան ել նա ոտար ե, նախապաշտպած:

Իր հնապաշտ քույրը, վորը սիրում ե իրան,
խնամում և վորը մնացել ե իրեն՝ «հնուց»:

— Այո, պետք ե լավ թափ տալ իրեն,
պինդ են կպչում իրերը,—մտածեց Հրանտը...

Շողեկառքը կոկորդիլոսի պես վոտները առագ ծուլ ու բաց անելով վազում, քաշ եր տախիս իր մարմինն ու պոչը։ Վաղոնները դղբղում եյին և Շիրակի քամին փոփոացնում պատռահանների վարագույրները։ Յեկ գաշտերը հետ հոսելով՝ հեռվում պտույտ գալով, լեռներն առաջ վարելով առաջ եյին բերել մի հսկայական պար, վորի տակտով հեռագրասյուների ցուցամատերը մեկ մեկու հետեից խրվում եյին վագոնների աշքը։

Այնպես ուրախ, գարնանային առավոտ եր, վոր յերգն աննկատելի դուրս եր թում մարդու բերանից։

Բայց վագոնների մեջ մի փոքր այդպես չեր, Գնացքը լենինականից նոր եր հեռացել և այդ վիճակում Յերևան մեկնող ուղեվորները դեռ վիճում եյին տեղերի գրավման համար։ Մի լենինականցի կնիկ ահագին բողչան գրել նստարանի վրա՝ չեր ուղում տեղ զիջել նախկին ուղեվորին, վոր մի ըովեյով գնացել եր

բուժետը, և վոչ ել բացատրում եր թե ինչ իբրավունքով եր գրավում ամբողջ նստարանը։ Դիմաց նստարանին ել մի գյուղացի մեկնվել քընել՝ չեր ուղում վոտները քաշել տեղ տալու մի ուրիշ գյուղացու, վոր իր տոպլրակի ապրանքով բոթում եր նրա վոտներին։

Այս վեճը խլանում եր մյուս կուպեներում տիրող աղմուկից։ Այնտեղ ել ուրիշ մարդիկ եյին վիճում տեղերի կամ այլ անհարմարության համար։

Վագոնը դեռ հանգիստ չեր։

Ներս մտավ վագոնի հաղթանգամ կոնդուկտորը՝ շեկ թութունի թավ բեխերը շրթունքների վրա կախ։

— Ընկերներ, տոմսերդ, բիլեթ... ասաց նա փափուկ, բարի տենորով։

Ուղերձները միահամուռ վոռնոցով ընկան նրա վրա։

— Սա ինչ կարգ ե, ինչու յեն մեր տեղերը բռնում, տեղ տվիք... ինչու չեք հոգում...

կոնդուկտորը ձեռը հեղինակավոր ծանրությամբ բարձրացը բոլորի բաց բերանների դեմ և շատ հանդիսավոր ընդհատեց։

— Հըլը յավաշ, կեցիք. մեկ-մեկ. բան հասկանանք։ Տեսնենք ինչ ե եղե։

Լենինականցի կնիկ անկան։

— Քուրս, ինչ գուղես, վեշտքդ դիր վերի
պոլկեն, եստեղ պալակաթ չի եղնի.

Հետո գյուղացուն դառնալով.

— Ընկեր ջան, որը ճաշ եղավ. պուաժիզա չե
ոք վատներդ երկնցնես պոլկի վրա. յել, յել, պա-
սաճիրին տեղ տու.

Գյուղացին կիսաքուն ճլմկոտաց.

— Ռո՞ֆ, հեչ գիշերս չեմ քնե, բանե խա-
պար եք:

Առաջ գնաց դեպի մյուս կուպեները, ուր
աղմուկը սաստկանում եր:

— Հա, ինչ ե, ինչ դալապալը ե:

Մի գյուղացի կնիկ-չեր իմացվում ինքն
եր առաջ տեղը բռնել, թե մյուսները յեկել
Եցկվել եյին այդ կուպեյում—ազմկում եր: Տե.
ու նեղ եր, և վոչ վոք չեր ուզում անցնել մյուս
կուպեն: Գորգուում եյին իրար վրա:

Կոնդուկտորը սկսեց կարդ հաստատել:

— Զնացեք մեկել կուպեն, տեղ կա:

Չեյին գնում:

— Դու գնա, —դարձավ գյուղացի կնկան:

— Յամ, ընչի: Ընձեն ետե գան՝ տեղ զավ-

թեն:

Սկսեցին դովուալ կոնդուկտորը սրտնեղեց.

— Լավ, լավ, ջաղչին հեքեաթը մի շինեք:
Փոխեք տեղերդ:

Յեվ գյուղացի կնկան, վոր ամենից բարձր
եր ճղավում.—

— Տը սնւս, լավ, ալ իրկան ալելույա
պետք չե:

Հետո ձանձրացավ.

— Դուք գիտեք. գուղեք գնացեք, գուղեք
սխմվեք: Հըմը կոփվ մի ենեք, կոփվ չի եղնի:
Վերջն ել.

— Ատամ (մարդ), հոգի հանեցիք: Գլո-
խը դինդ եղավ:

Ու հեռացավ իր կուպեն:

— Այ ողուներ, լեն աշխարքի մեջ ինչ
նեղ կապեք:

Նստեց: Զնայած այդ վեճին՝ չեր կարողա-
նում լավ նեղանալ, անախորժել:

— Ե, —մտածեց նա՝ դառնալով իր առա-
մաղբության և ախորժանքով մտիկ տվեց թեյա-
մանին, վորի յեռ ջուրը նոր եր վերցրել կայա-
քանից: Գույնը ավել եր: Գոհաժամիտ աչքերով
շոյեց իր պղտոր բաժակը, թեյ ածեց ափսեն—
ամեն գործողություն զատ զատ ապրելով իբրև
կյանքի մեծ քաղցրություն—հետո շաքարի պըս-
տիկ բեկորը կենսահատիկի պես նետելով բե-
րանը՝ բեխերի փունջը թթվեց ափսեյի թեյի
մեջ և փոշտոցով ներս քաշեց անձկալի հեղուկը:
Անբացատըելի յերանություն:

Ապա գրպանից հանեց պատկառելի ծալովի դանակը, բացեց, կոշտ ձեռը մեկնեց կարմիր բոքոնին ու դարձյալ զդալով մեկ մեկ ամեն գործողություն և գրանց մեջ մեծ քաղցրություն՝ սիրով մի ձեղ կտրեց բոքոնից և չոք յեզրը թրջելով թեյի մեջ ապարակ բերանը կերավ, թեյն ել վրան խմեց ու հառաջեց.

— Ոխայ, բաղնիքմ արժե՞ր:

Թեյը վերջացրեց և ուզեց մի բոպե նստած մնալ. բայց նրան խթեց անհանգիստ մի բան—առողջությունը, վոր յեռում եր մեջը զինու պես և տրամադրությունը թրթուացնում:

Ու ինչպես ամեն առողջ մարդու մեջ, այնպես ել նրա մեջ ամեն բան՝ չնչին գործողություն, մի անցք, առարկա, թեթև շարժում—հաճույք եր ինքնին, Յեկ նկատելի:

Արդեն սոսկ ապրելը նրա համար ախորժանք եր: Արյունը առողջության հետ հոսեցնում եր նրա յերակներում այդ զդացումը:

Գործերն ել լավ եյին յերեի: Բայց ինչ կարող եյին լինել մի կոնդուկտորի գործերը... Թիֆլիսից Զուլֆա, Զուլֆայից Թիֆլիզ: Բայց նրա մեջ այնքան անսպառ եր կյանքի ախորժակը, հաճույքը զործ անելու, վոր վագոնին հսկելը, տուսերին նայելը, կայարաններում իջնելը, վագոնում մոմերը վառելը—այս ամենի

մեջ մեծ խորհուրդներ կային նրա համար: Նա գյուղայի յեր: Յերբ աղքատ, հողագուրկ գառավ հողը վոնդեց նրան: Ըսկավ յեր կաթուղին, և ահա քսան տարի յեր կոնդուկտորի պաշտոն կատարելով՝ սկսել եր արհամարհել հողը, սիրել յերկաթը: Նա իր սերը տվեց յեր կաթուղային գործին—գնացքին, կայարաններին զեպոյի բանվորներին, ծառայօղներին: Ու մինչ զեպոյի բանվորներին, ծառայօղներին: Ու մինչ զյուղում, հողի վրա մենակ եր, զուրկ, անհոգ՝ այստեղ յերկաթի վրա ապահով եր՝ զգալով իբրեն մի մեծ ընտանիքի անդամ—ամբողջ միության յերկաթուղում և—հետո, ինչպես լուս եր ժողովներում՝ գործարաններն ու ձեռնարկները—բոլորն իր ընտանիքինն եր, Դանրան ուժ եր ներշնչում: Դա իր տունն ե, իր անեցքը: Առաջվա մի հատիկ չութի տեղ հիմա բանում ե մի հսկայական գործիք—գնացքը—միշտ սարքին, կարգին, հարյուր հազարավոր ընկերների ոգնությամբ, վոր այդ մեծ գործիքների վրա աշխատում են, պայքարում, իրար պահում, և ամենքն ապրում են:

Ու մինչ վազնում նստում են մշտահոգ, տխուր, քթները կախ ուղեվորներ, հաճախ նըրանց մեջ նեպմաններ, վոր վողջ ճամբին միայն մտածում են թե ինչպես մի մեծ գումար այս մտածում են թե ինչպես մի մեծ գործիքներից, կամ ինչշանթեն այս ինչ ձեռնարկությունից, կամ ինչ-

պես անախորժակ մի մաղձոտ ծառայող, անտարբեր տեխնիկ, մի պեսիմիտ ինժիներ, թերեւս հոգնած, ուղղակի կյանքից դժգոհ մարդիկ սրտնեղում են յերկար ճամբից, և ախորժակները կորցրած՝ ծխում են, ծխում, շտապելով տեղ հասնել, սարքել մի դժվարին կոմբինացիա ավելի շահելու համար, մի կերպ դուրս պրծնել անփույթ գործի, մասարարության համար իրենց հետապնդող պատասխանատվությունից, մինչ այդ մարդիկ յերբեք չեն ուրախանում, ձգտելով մի կերպ քշել կյանքի մնացորդը դեպի վոչնչություն ու ներփոտ, մաղձոտ նայում են ժամացույցին ու հորանջում—կոնդուկտորը չզիտի թե ուր պարփակի իր 40 սուբլիանոց կյանքի ուրախությունը:

Դնացքը կանգնեց հետեւալ կայարանում։ Կոնդուկտորը շտապեց իջնել վագոնից։ Կայարանը դուրս եր քաշում։ Բայց վագոնի դրանը կանգնելու պարտականությունը մեխեց նրան տեղում։ Նա ժպտաց՝ նայելով վնչացող մի շոգեմեքենայի կողմը։ Այնտեղ նկատել եր մեքենավարի ովնականին, վոր մեքենայի մեջ ինչ վոր մի լծակ եր վոլորում ու գորգոռում։ Նա քրտնամխել եր։

— Միխակ—ձայն տվեց նրան կոնդուկտորը ուրախ ձայնով։

Մեքենավարի ողնականը վեր նայեց ու բարկացած ժպտաց։

— Հը՛, ի՞նչ կա։

— Ի՞նչ ես կըակ կարե, ետ ուր, իմանսըզ։

— Թիֆլիզ, պատասխանեց Միխակը այնքանց ցած, վոր չեր լսվում։ Բայց կոնդուկտորը հասկացավ։

— Գնա, գնա, Մերոբը Սանահին քեզի կըսպասեր։

Կայարանէ հերթապահը, վոր գնացքին հանդիպելիս հազիվ եր կոճակները կոճկել՝ շտապի դուրս թռչելով՝ քնատ նայում եր գնացքին։

— Հը՛, Բարսեղ—մոտեցավ նրան կոնդուկտորը—ի՞նչ ես սմբե, դոշդ դուրս քցե, այ ուսուր։

Հերթապահը քնատ քնատ նայեց նրան և հորանջեց։

Կոնդուկտորի հետեւից մեկը կոպիտ բզեց։

— Դու ի՞նչ եր յառավոտ կանուխ ձեռք ցկե որթըլաղ։

Կոնդուկտորը արագ հետ նայեց։

Սլաքվարն եր։

— Գլոխդ թաղեմ, Մուգուչ, գլոխդ, գիշերս մսել ես։ Արի, արի, չայմ խմցնեմ՝ ոսկուներդ բացվին։

— Զայը թարկ եմ երե, արագ կիմեմ։

— Շատ լավ կենես: Տես, Սեթոյին ոյինը
չխաղաս:

— Ի՞նչ ե երե:

— Խմել քներ եք, սեմաֆոռը վեր եք վա-
քե, սաստավը դուս եկավ:

— Չե հա:

— Յըպը: Իրեն ել դուս երիս: Տնաքան-
ություն չե: Դուշմանը չի ենե:

Ու կոնդուկտորը ճմկուում ե ուրախ.

— Ոո՞ֆ, — գիշերս հեշ չեմ քնե: Այնպես ե ա-
ռում այս խոսքերը, ինչպես մի ուրիշը կաներ.
«Գիշերս շատ լավ քնել եմ»:

Աչքերն ուռել՝ անքնությունից ջերմորեն
պսպղում են — բայց դա կոնդուկտորի տարերքն
ե: Կոնդուկտորը չկիտե յերը ե քնում, յերբ
զարթնում: Յերկաթի առողջությունը, վոր բե-
րել ե դյուղից՝ վոչ մի կերպ չի մաշվում:

Գնացքը նորից դուրս յեկավ կայարանից և
սկսեց կոկորդիլոսի պես սողալ դաշտի միջավ:

Անիվսերը դընգում են, վագոնի տակ զըն-
գում ե ինչ վոր մի շղթա, արել ջերմացնում
ե լեռնային ողի սառ հեղուկը — առողջության
ըմպելիքը:

Կոնդուկտորը մի անգամ անցուդարձ արավ
իր վագոնում, ստուգեց տոմսերը, խոսեց սրա
նրա հետ և դարձյալ գնաց իր նեղ կուպեն, վոր

նրա համար լայն եք, ինչպես աշխարհը:

Ու մինչ վագոնում քըթմնջում եյին կյան-
քից արտնջող ուղեվորները՝ կոնդուկտորի կու-
պեյից գուրս եք թոչում նրա առողջության
անզուսպ պութկումը — ուրախ յերգը:

—

Վ Ե Ր Փ Ը

Նրանք յերեքը մի սրտառուչ յեռյակ եյին հիվանդանոցի այդ բաժնի մի խումբ բանվոր հիվանդների մեջ, վորովհետեւ նրանց մահճակաները իրար կողքի եյին և մեկուսի:

Յերկուսը նրանցից, վորապաքինվում եյին արդեն՝ անձունի խալաթներն հագներնին, անշալվար, հողաթափները քսքստացնելով հատակին՝ ման եյին գալիս միջանցքում կամ այլ բաժիններում, այցելում մյուս բանվոր ընկերներին, և նորություններ, լուրեր բերում յերրորդ հիվանդին, վոր չեր կարողանում ման գալ և նրանցից ավելի յեր սրտնեղում:

Մեկը կապետն եր՝ յերեսունի մոտ մի բանվոր: Մատը վատ կարել եր սուր գործիքով և ահա մի ամիս ե հիվանդանոցումն եր: Յերկորդը՝ հացթուխ Գեվոն՝ քառասունի մոտ մէ որիգինալ եր, յերկար միքուքը գոզնոցի պես կղակից կախ: Նրա ել ձախ վոտն համարյա ամբողջ այրվել եր կաթսայի յեռ ջրով, վոր վրան եր թափվել փոնից հանելիս: Ախալցխացի յեր.

Փնթփնթում եր շարունակ և այնքան լուրջ, վոր ծիծաղ եր շարժում: Նա չեր նկատում այդ ծիծաղը կամ անտեսելով՝ իր մեջ ասում. «բան չունես, թող ծիծաղեն»:

Դեպքեր, պատմություններ, հեքիաթներ եր պատմում — այն ել բարկացածի պես, վորով ավելի զվարճալի յեր դառնում թե պատմությունը, թե ինքը:

Յերբորդը Խաչիկն եր: Սա վերք եր ստացել կոնքի վուկրում համաշխարհային պատերազմին: Գնդակի վերք եր — վոչ բուժվում եր, վոչ մեռցնում: Բայց դանդաղ սղոցում եր Խաչիկի կյանքը, ուտում նրան, տանջում:

Յեվ Խաչիկը դառել եր մշտական վիրավոր, հենակներով ապրող դժբախտ արարած:

Վիրավորվելուց հետո նրան տարան Թիֆլիզ, պահեցին մի տարի, ապա բաց թողին, վոր գնա իր գյուղը: Վերքը հանկարծ նորից առաջ յեկավ և պարզվեց վոր գեռ չեր բուժվել: Թարախակալել եր թե ինչ: Կրկին անդամնատեցին: Այս անգամ Բագվի հիվանդանոցում: Զոդնեց և այս անդամնատումը:

Այսուհետև Խաչիկն սկսեց դեգերել հիվանդանոցից հիվանդանոց՝ իբրև դեղին ձլերք ընկած ստվեր:

Վերջին տարիներս մի անգամ միայն վեց

ամիս ապրեց գյուղում, իրենց տանը, յեղբոր
խնամքի տակ: Բայց յեղբայրն ել չքավոր գյու-
ղացի, ուսողը շատ՝ նեղվեց, սկսեց տրտնջալ:
Խաչիկն ել չուզեց ծանրացնել նրա վիճակը,
գնաց Յերեվան, մտավ հիվանդանոց, վերջ տա-
լու կամ վերքին կամ իրեն:

Հույս եր տալիս իրեն, բայց...

— Տեսնենք, կլավանա: Յեթե այս յերկու
ամիսն ել չլավանա...— ասաց խիբուրդն ու
սուր ժպտով նայեց Խաչիկի աչքերին:
Խաչիկը նվաց.

— Ի՞նչ, ելի՞ կտրեք...

— Այո, ելի՞ կկարենք. Ի՞նչ կա վոր: Ու
բժիշկը լայն ժպտաց:

— Ախր, մեռա ե՛, սրա ձեռին: Վերջ տվեք:

Բժիշկը վեր կացավ, ձեռքը դրեց Խաչիկի
ուսին և թեթև թակեց.

— Մեռնելը ետքան ել հեշտ չի: Պինդ կաց:
Քեզ համար ի՞նչ—ե՞նքան ես դիմացել...

Ու հեռացավ տարակուսելով. «Իսկապես
վնաց ե լինելու սրա բանը»:

Չարորակ, համառ, չարագուշակ վերքը շատ
կենսունակ դուրս յեկավ: Բուն եր դրել Խաչի-
կի մարմնի մեջ ու ճանկերը ցցել, մնացել:

Խաչիկի կաշին ու վոսկորն եր մնացել—
դառել եր կմախք: Ճիշտ ե՝ ջլուտ եր նա, դիւ-

մացկուն, բայց ահա տասերկու տարի վերքի
հետ կոփի տալով՝ դառել եր մաղձոտ նյարդա-
յին, նրա սե խաղողի աչքերը թափածալի ցուքեր
եր արձակում:

Քիչ եր խոսում Խաչիկը, ավելի ականջ եր
դնում: Բայց ունկնդիքը աչքերը հանկարծ չո-
վում եյին— կնշանակի Խաչիկը ականջ եր գը-
նում իր վերքին: Ցավում եր, ցավում խուլ
դանդաղ, միշտ:

Կապետը կարմիր այտերով, առողջ յերի-
տասարդ եր՝ նուրբ դիմագծերով. Սև սաթի
փայլուն մազեր ուներ, նուրբ ունքեր: Նրա
վերքը թեթեզ եր և գեղեցիկ դեմքը փայլում
եր մշտական ժպտով: Հեռվից յերկում եր նը-
քա մարդարարի առողջ ատամնաշարը, վոր թուխ
դեմքին հաճելի կոնտրաստ եր տալիս՝ մատնե-
լով նրա մեղմ ուրախ տրամադրությունը:

Զանգեղուցի յեր, առաջ Բազվի բանվոր,
այժմ Յերեվանի գործարաններից մեկում փա-
կանագործ: Գրագետ եր և դիտակ: Նա հիվան-
դանոցի հիվանդ բանվորների կենարոնն եր:

Բայց իբրև «զրացի»՝ իր ինամքի տակ եր
առել Խաչիկին, մյուս կողմից ել ընկերություն
եր անում հացթուխ Գեվոյի հետ՝ նրա լուրջ
մինթփնթոցները զվարձալի միջոց համարելով
Խաչիկի Յաբէիծն ու իր ճանձըույթը փարատե-

լու համար: Բանվորները սիրում եյին նրան:
Առավոտը վաղ կնայեր Խաչիկի կողմը.
— Հը, Խաչիկ, զարթնել ես:
— Ո՞վ ա քնել վոր... նվում եր Խաչիկը
հաշտված տիրությամբ:

Բուժվող վերքերի ծանր հոտը թունավորում եր ամեն տրամադրություն: Բայց յերք կապետը ուրախ վեր եր թոշում, բաց անում պատուհանը և ոդը աղբրի ջրի պես լցում եր պատուհանից ներս՝ բանվորներն ըմպում եյին ագահությամբ.

— Ո՞ի՞ս այ, ողորմի հարիկ-մարիկիք հոգուն — ծոր եր տալիս Գեվոն տափակ ձայնով:

Մահճակալները ճռճռում եյին և հիվանդները շուռ ու մուռ գալով՝ մեկ-մեկ վեր եյին կենում: Կապետն շտապում եր միջանցքը.

— Գնամ տեսնեմ թեյը բերհում են:
— Համ, մարիֆաթի՛դ դուքպան, մե խելքաթմերե, — կպցնում եր հետեվից հացթուի Գեվոն:

Կապետը գնում եր և լիացված շառագույն այտերը սրբելով առողջության պես ուրախ ներս եր դալիս.

— Խաչիկ, հիմի ջուրը կբերեն, լիացվիր վոր թեյը պատրաստ ե:

Շուտով սկսվում եր թեյի ուրախ ժամը —

գըույց, ծիծաղ, կյանքի հույս, ապրելու հաճույք...

Յեվ հիվանդանոցի որն սկսվում եր: Բանվորները դուրս եյին գալիս միջանցք, վոմանք գնում եյին խիրուրգային բաժին՝ վիրկապը վոխելու: Հետո՝ ճաշ ձաշից հետո պառկում եյին հանգստանալու և իրիկնապահին ճայները բարձրացնում: Խոսեցնում եյին Գեվոյին և զվարճանում: Խոսեցնողը միշտ ՇԱՐԱՐԱԹԻ բանվոր Միկիչն եր:

— Ջանըմ, չայն ինչու ուշացուցին — սըստ նեղում եր Գեվոն:

— Բա դու խի եյիր փոնում հացն ուշացնում, — ձեռ եր առնում Միկիչը:

Հացթուին աչքերը խիստ չուսմ եր Միկիչի վրա.

— Ի՞նչ կսե:

— «Ի՞նչ կսե» — միտդ չի, վհնց եյիր մեզ յերկու ժամ հերթ պահել տալով բեզպացնում:

— Վերջն ել ասում թե հաց չկա, — խթում եր մյուս կողմից Բանկոպի գործակատարը:

Հացթուիը վեր եր նստում տեղից ու բարկությունից կակագում.

— Ծո... ծո... ինչ կը սե... ալմար դառնայի, ինձի ուտեյիք: Ալուր չկաբ, ինչ տայի:

Յեվ շրթունքներն ուղցնելով փնչում եր.

— Հիմի մեքենական փուռն եմ. հիմի ինչի չեք ըստ անոթի յենք:

— Հիմի իսկական բանվոր ես— աչքով ե անում Միկիչը մի հասաւավոր մեխանիկի— եղան չի, Դավիթ:

— Իհարկե, — կեղծ լրջությամբ հաստատում ե Դավիթը և ունքերի տակով մտիկ տառիս Գեղոյին:

Սա կատաղում ե.

— Ծո, մուխ մարածներ, յեր չեմ եղեքանվոր. դուք ձեր մորը փորն եցիք, որ յես խմոր կշաղվեյի:

Ու յեպիսկոպոսական միքուքը շրջում ե «Արարատի» Միկիչի կողմը.

— Ի՞նչ եքոքոաս: Այ ողնուր, յես քեզի պես խմիչք հարբեցողություն չեմ ծախե, յետ հաց եմ ծախե: Իսկական բանվորը յես եմ:

Խիստ նեղացած ե: Բոլորը ծիծաղում են: Կապեալ հաշտեցնելու համար կես լուրջ բացարում ե, վոր խմիչքը հիմա առողջական նպատակներով ե շինվում, և բոլորն ել բանվորներ են:

— Քսածդ հեչ քոռ կապեկիմ կառնեմ— առ մենակյանքի բանը հացն ե, չե թե խմիչքը:

«Արարատյին» չի պաշտպանվում:
Բայց հացթուխը միմիայն ոպողիցիա չի:

Նա լավ պատմող ե: Զոռում են վոր պատմի: Բայց նա զայրացած ե գեռ: Զի խոսում: Հետո մի քիչ մեղմանում ե, բայց գեռ ելի լուրջ, վոտաբորիկ, ծալապատիկ նստում ե անկողնի վրա, միքուքը կախում փորին և չորս կողմը հավաքելով հիվանդներին՝ հեքիաթ ե ասում:

Բոլորը սիրում են նրա լուրջ, բարկացած տոնը, տափակ վոճը և ինչ վոր եպիքական շեշտը:

Պատմում ե թե ինչպես յոթ գլխանի դեկ ճանկն ընկած յերկու յեղբայրների կրտսեր յեղբայրը գալիս գտնում ե որանց և կորվ տալիս դեկ հետ:

«Զանըմսըն տղա, քա—աշեց թուրը, մե հատմ տարավ բերեց ու հը—ենպեսմ զարկեց դեի ճտին՝ գլուխը գունդմ թրիքի պես ընկավ գետին: Ծիծաղում են— վոչինչ, այստեղ թույլ ե տալիս: Բայց ինքը լուրջ ե:

Հետո բոլորը ցըփում, պառկում են, խոսքը փոխելով: Կապեալ շնչիսցնում ե լրագիրը, շուռ ու մուռ տալիս և ընկնելով մահճակալին մեղմաժպիտ նայում ե Խաչիկի կողմը.

— Գիտես ինչ ե յեղել:

— Ի՞նչ ե յեղել— տնքալով կրկնում եր Խաչիկը և տխութ հետաքրքրությամբ նայում կապեալ կողմը:

— Վիենայի բանվորները ընդհարվել են կառավարության հետ:

— Համ, ընդհարվել են—ցավից դեմքը կըծոկելով կըկնում ե Խաչիկը և շուռ գալիս դեպի նա՝ ականջ դնելով սակայն իբ վերքին:

— Ընդհարվել են,— ձայնը բարձրացնում ե Կապետը, վոր մյուսներն ել լսեն,— կրակել են վոստիկանության վրա և կոփը շարունակվում ե:

— Կհաղթեն:

— ԶԵ, վորտեղից... կճնշեն նըանց... անպատճառ, — ասում, հաստատում ե Կապետը և ժպտում:

Տարորինակ ե: Միթե ուրախ ե, վոր կճնշեն:

— Ետ լավ ա վոր կճնշեն, — ասում ե Խաչիկը՝ նւշը միշտ իբ ցավի կողմը:

— Եսորվա ճնշելը վոչինչ, վաղը կհաղթեն: Բանն են ե, վոր բանվորներն ակտիվանում են:

Խաչիկն համաձայն ե: Այսինքն հավատում ե Կապետին: Վարովիետն շատ և սիրում Կապետին: Յեզ սիրում ե նըան, վորովիետն նըախուքերի մեջ մի ինչվոր անհասկանալի միթարություն ե գտնում:

— Հեծ գլուխ չի մտնի— տափակ նկատում ե Գեղոն և աչքերն առաստաղին հառում — պատրաստ չեն՝ կորիվ կենեն, մտինչխելք ե:

— Սա առաջին կոփներն են: Վերջի կոփները՝ վերջը, — ծիծաղում ե Կապետը:

Գեղոն գրգռվում ե.

— Ե՛, եղավ: Դավա, արի ես խոսքը կեր:

Ու ինքն ե բացատրում:

— Եղան չե: Առաջ ու առաջ՝ սաղ աշխրաքի բանվորները պիտի լավ պատրաստվին: Վերջը յեր կտեսնին որ պատրաստ են, նշան պիտի տան ու վրա տան:

Կապետը մի քիչ լրջացնում ե գրույցը՝

— Կովել՝ դե են ա պատրաստվել կնշանակի: Կովեն կակտիվանան: Մասսան պիտի պատրաստվի մեծ ու փոքր կոփներով: Իհարկե, վերջերս՝ մինչև մասսաները պատրաստ չինին հաղթություն չի լինի:

Մի որ ճաշից հետո ետքետը ներս մտավ լրագիրը ձեռին և նստելով անկողնի վրա ասաց:

— Յեվրոպական բուրժվագիւն պատերազմի յե պատրաստվում:

— Բուրժվագիւնի գործն ինչ ա վոր. պատերազմ պիտի անի վոր գլուխը պահի—ասաց սալաթն հանելով ընկավ անկողնի մեջ Դավիթը:

— Շան վորդիք են,— մըմռաց ատամների մեջ «Արարատցին»:

Խաչիկը լսեց և սրտնեղած թե իր վերքի ցավից և թե այդ խոսքերից՝ վնասց.

— Տնա՛քանդներ, տնաքանդներ... բա եղան արունը վոր թափեցիք՝ հերիք չի... ո՞չ... Կապետը պայծառ ժպառվ նայեց Խաչիկին.

— Բուրժվագիան ի՞ր արունն ա թափում, Խաչիկ, վոր բեղարի՞—բուրժվագիան իմ ու քու արունն ա թափում:

— Ե՞ս անդամ ել կթափի մեր արունը կամ յեվրոպական բանվորի արունը, այ—սպառնաց մեկն անկյունից. մի յերիտասարդ:

— Կարող են, այ տղա, իսի՞ չեն կարող, պըսվակացիա չի, — հանդիսաւ ձեռվ ասաց բանկոպի գործակատարը:

Դավիթը մոռյլ ու անտարշեր նայեց, նըստեց նրա կողմը, անխռով շուռ յեկավ մյուս կողքի վրա և աչքերը խփեց վոր քնի:

«Ի՞ս, դրանց հերն ել...»

Մյուսներն ել սկսեցին զըսւյցին ականջ դնելով՝ հետզհետե իրենց մտքի հետև ընկնել:

Պատերազմ կարող ե և լինել և չե: Հանգիստ պառկած բանվորներից շատի մեջ քնած մի բան եր պատերազմի յերկյուղը—վոչ իրական բան, վոր կա և չկա, ինչպես յերկրաշարժը, խոլերը, ժանտախտը—ինչ մտածես այդ:

Բայց կապետը խոսում եր այդ մասին: Նա անհանդիսաւ եր, նա տեսնում եր պատերազմի դաժան ուրվականը—ահա թե ինչու զգայուն եր դեպի ամեն մի լուր, վոր պատերազմին եր վերաբերում:

Խաչիկ Խաչիկին.

— Միամիտ կաց, Խաչիկ, յեվրոպական բանվորները չեն թողնի...

Գերսանացի, անգլիացի, տմերիկացի, Փըստանսիացի բանվորները... բոլոր բանվորները, մենք, չենք թողնի պատերազմ:

Խաչիկին ազդում եյին կապետի խոսքերը՝ կապետն այնպես եր պատկերացնում անգլիացի, ամերիկացի, չին ու հնդիկ և աշխարհի բոլոր բանվորներին Խաչիկի առջե, վոր կարծես սրանք Խաչիկնց զյուղի ախպեր տղերքը լինեն:

— Կհաղթենք, Խաչիկ, կհաղթենք, դարդ մի անի. վոչ մէ բանվոր, վոչ մի զյուղացի չի կը անի իմպերիալիստական պատերազմում—հավատեց կապետը:

— Հա, հա, հա—թեթևացած հառաչեց Խաչիկը, — հնարին եղ ա, եղ, ուրիշ հնար չկա:

Բայց կապետը նոթերը կիտեց.

— Մենք նրանց բոլոր պատերազմները կը դարձնենք քաղաքացիական պատերազմ և վերջ կտանք բոլոր պատերազմներին:

Կապետը դուրս նայեց բաց պատուհանից։ Ծիծեռնակները գժված ժխորով յեկան ու սլաշան մոտից։ Իրիկնահովս սկսեց, ողը դառավ ջինջ հայելի։

Ու մինչ բանվորները կիսաքուն աչքերն առաստաղին՝ իրենց ապաքինման մտքերով հանգըստանում ելին։ Կապետը Խաչիկին պատմում եր թե վորքան պիտի հեշտանա կյանքը, յերբ ամբողջ աշխարհում հաղթի պրոլետարիատը։

Խաչիկն ականջ եր դնում։ Զերմից պլազմող նրա աչքերը թափառում ելին կապետի գեմքին, նրա աչքերի պայծառ խորությանը մեջ և այնտեղ տեսնում մի ինչ վոր նոր աշխարհի ուրախության դուռ, ուրիշ աշխարհի հույսի պես բան, վոր պահպած եր նաև իրեն՝ Խաչիկի համար։ Ահա թե ինչ միսիթարություն եր, վոր նա գտել եր կապետի մեջ։ Դա հենց այս բռնկեցիս պարզվեց Խաչիկի համար, և նա ուրախացավ։

— Պատերազմ չի լինի, վիրավոր չի լինի։ Վիրավոր կինի արտադրության պատերազմում ընության դեմ, այն ել կկանխեն, հիվանդանոցների տեղ հանգստյան տներ կինեն, կմիանա ամբողջ աշխարհի պրոլետարիատը, և բոլորս կդառնանք մի ընտանիք։ — Սոցիալիզմ։

— Այս... և Խաչիկը տխուր նայում ե պա-

տուհանից դուրս, յերկնքի կապուտ անդունդեմ մեջ։

— Մի տիրի, Խաչիկ, սոցիալիզմը կլինի, պատերազմ չի լինի ել։

Պատերազմի վերջ, սոցիալիզմ—ով չե ով Խաչիկն հավատում ե դրան։ Դա Գեվոյի հեքիսաթը չի։ Դա իրականություն ե—ինչպես Խաչիկի վերքը, վերքի ցավը և ցավով լի կյանքը։ Խաչիկն հավատում ե դրան, հավատում ե վերքի բոլոր ցավի ուժով, մեռնող կյանքի բոլոր թափիծով։ Ու մինչ մյուս բանվորների համար դա վոչ առորյա, մեծ հարց ե, հենց Խաչիկի առորյան, միակ հնարավորը գա յե։ Նա հաճախ յերազում ե այդ և թվում ե, յեթե «այդ լինի» նրա ցավերը կդադարեն։

Ցեվ իրոք՝ դադարում են կարծես...

Այսպես անց կացան հիվանդների որերը և նրանք հետզհետե ապահովություն։

— Ոո՛ֆ, մեռանք պառկելով—տբոնջաց հացթուխը—երթանք խմորն ընկնինք։

— Հա, գնանք, աշխատենք—կցեց «Արարատցին»։

— Ափսոս չե. աշխատիլը կյանք ե—ուժնեղեց հացթուխը։

Կապետի և մի քանիսի որերն ել հասել ելին։ Արդեն դուրս ելին գրվում։ Նրանց գեմքին մը-

ուայլվեց գործնական լրջությունը, գործի մտա-
հոգությունը: Խախտվեց հիվանդական վիճակում
ձեռք բերած սերտությունը:

— Ե, հերիք ա, զնանք աշխատենք, — ասաց
Կապետը և նստեց մահակալին:

Հետեւյալ որը պետք եր մեկնելին բանվոր-
ները:

— Պետք ա աշխատես — մրմթաց Խաչիկը
տիրությամբ:

«Աշխատես — նրա համար՝ ապրես, վայելես
կյանքը:»

Յեթե Խաչիկն էլ կարողանար աշխատել,
մկանները տաքացնել, զզալ սրտի առողջ բա-
քախը...

Վորտեղից: Դա նրա համար այնքան ան-
հասանելի թանգ բան եր — աշխատել...

Յերեկոն արտակարգ եր: Ուրախ՝ գնացող
բանվորների համար, տիսուր՝ մնացողներին:

Թեյ խմեցին: Հատուկտոր խոսեցին: Ար-
դեն դրսի մարդկանց վաղվա խոսակցություններ:

Այս անգամ վաղ պառկեցին քնելու: Քնե-
ցին բոլորը անխոռվ, հուսալից:

Կապետն ել լրագիրը ծոցից դրեց բարձի

տակ ու մեջքի վրա պառկեց քնեց Խաչիկի կող-
քի մահակալին:

Յեվ ահա կես գիշեր ե: Հանգիստ շնչում
են բանվորները: Միայն Խաչիկն ե արթուն:
Նստել ե անկողնի վրա և թախծոտ աչքերը հա-
ռել պատուհանին: Մտածում ե: Միշտ միե-
նույնը:

Փոքրուց բարակ եր ուրիշի դրանը: Ան-
թիվ անգամ կտրել են նրա վարձը, ծեծել, կի-
սաքաղց պահել: Տարիներ համբերել ե, վոր մի
գուռ բացվի: Բայց վոչ մի գուռ չբացվեց: Մե-
ծացավ ու չորացավ այդպես ել ուրիշի դրանը:
Հետո ուրիշի պատերազմ, ուրիշի համար վերք,
և ահա արթիներ շարունակ հիվանդությունից
տուն, տնից հիվանդանոց՝ քաշում ե ուրիշի
պատերազմի պատիքը և սպասում, վոր մի որ
լուսանա իր համար: Որը չի լուսանալու: Խա-
չիկն զգում ե այդ: Մանավանդ գիշերները:
Մեծ ուրախություն եր նրա համար Կապետը —
նա ել զնում ե վաղը:

Բաց պատուհանի սառը աչքի մեջ, յերկն-
քի հեռու, կապույտ անապատից մի պլան
աստղիկ աչքով ե անում Խաչիկին: Ժպտում ե
իր տարօրինակ, հավերժական ժպտով, վորից
տիրում ե Խաչիկը: Աստղի կյանքը — նրա մա-
կըն ե: Նա զգում ե այդ: Սոցիալիզմից բաժին

Հի հասնելու իրեն, ինչքան կուզի թող հավատա:
Տիրում ե, տիրում, բայց հետն ել զգում ե,
վոր սոցիալիզմից մի բան հասնում ե իրան—
հավատը, վոր պիտի սոցիալիզմ լինի: Յեթե իր
համար լավ չի լինելու, ուրիշների համար լինե-
լու յե. բայց հո աշխարքը լավ պիտի լինի՝ յերբ
ինքը կզնա աշխարքից և կլինի միշտ լավ, միշտ
լավ:

Դա ելլավ ե,—դա ելթեթեռթյուն ե Խա-
չիկի համար:

— Խաչիկ, չես քնել,—հարցնում ե Կապե-
տը մի բոպե զարթնելով, կիսաքուն:

— Յավում ա, Կապետ ջան:

— Պառկի, տաքացրու, կանցնի—մոմում
ե Կապետը և քնի ախորժակով շուռ գալիս մը-
յուս կողքին՝ քնում:

Խաչիկը լսում ե նրան, պառկում: Իհարկե-
ցավը չի անցնում: Նա կոնքի մեջն ե, մքմի-
ջում ե շարունակ, արթուն ե շարունակ: Բայց
Կապետի մի ջերմ խոսքը տաքացնում ե Խաչի-
կի սառչող սիրտը: Նա աչքերը կպցնում ե և
արթուն՝ մտածում մինչև լուսաբաց: Վերջը մի-
այն մի քիչ թմրում ե, նիրհում:

Առավոտյան, բոլոր գնացողները վոտքի
վրա եյին: Գնացին հագան իրենց կյանքի շորե-
րը, և շորերի հետ ել փոխվեցին: Ել չեյին խո-

սում հիվանդների հետ, այլ իրար հետ, այն ել
կցկտուր:

— Այ տղա եղ շանվորդին չեկավ:

— Չեկավ վոտով կզնանք, թքած մեջը:
Խաչիկի հետ չխոսեցին:

Միայն Կապետը մոտեցավ, պինդ բոնեց
Խաչիկի ձեռը: Բան եր ուզում ասել՝ գուրս չե-
կավ: Ուժգին սեղմեց Խաչիկի մոմի դալուկ
ձեռը և այսքան ասաց.

— Պինդ կաց, Խաչիկ, կըլի, լավ կըլի...

Ու դուրս գնաց ուրախության պես:

Ն Ա Ր Գ Ի Զ Ը

Նա ընտրվեց գյուղխորհրդի անդամ. զնաց մինչև խորհուրդների Հայաստանյան համագումար:

Նա՝ Նարգիզը:

Յերեսունի մոտ մաշված մի կին եր նա՝ մտրակի ճկուն մարմնով, թախծալի ժպտի ցոլքերը խոշոր սև աչքերում:

Համագումարի նախորյակին նա ճամբարնկավ Յերևան իրենց հարեան Սոսոյի սայլով, վոր մի քանի գյուղացիների հետ գնում եր քաղաք:

Սոսոն հաստ շրթունքներով շվացրեց մի յեղանակ, աչքերը ճամբին դցեց, հետո գլուխնորոեց և ասաց ինքնիրան.

— Կնանիք զոռում են, հա...

Նարգիզը բատրակի կին եր. Յերբ նրան պատղամափոր եյին ընտրում ամուսինը ամոթխած ժպտով հետ նայեց իր ընկերներին.

— Այ տղա, ձեռ քաշեք: Նարգիզն ինչ կարա անի:

— Նարգիզը սարը շուռ կտա: Եղ քու բանը չի—ձայն տվին բատրակներն ու ծափահարեցին:

— Դուք եք իմանում,—ձեռը թափ տվեց ամուսինը,—խելքս չի կտրում...

— Ընկեր Նարգիզ, ընկեր Նարգիզ...

— Լավ, լավ, քվեարկում եմ: Ովքեր համաձայն են...

Բոլորի ձեռքերը քամու պես փչեցին դեպի վեր:

Ամուսինն ել ձեռը բարձրացրեց:

Յեզ ահա Նարգիզը Յերևանումն ե: Տեղավորվել ենոր հյուրանոցում և դուրսը զբոսնում ե:

Արովյան փողոցով մաքդային բազմություն ենոսում, Փնջվում են, քանդվում, խումբ խումբ, մենակ, անցնում անտարբեր, անուշադիր, շատերը քթերը կախ:

Այդ բազմության մեջ աննկատ անցնում ե Նարգիզը ածուխի ժպիտը աչքերի մեջ, արեւագոտ դեմքը շըջելով շենքից շենք: Մեկ մեկ դիտում ե խանութները, քյոսքերը, ցուցանակները, կանգնում ե վիտրինների առջև: Վոչ վոք այնքան բաներ չի նկատում, վորքան Նարգիզը: Վոչ վոք չգիտե ինչ մեծ հաճուք ե այրվում նրա սըտի մեջ չնշին առարկաներն անգամ դիտելիս: Վարքան վճիռ են այն նիկելի թեյաման-

ները, սաոցի ծաղիկների նման ապակեղենը, կառեղենների գունագեղ ջրվեժները վիտրիներում վերից վար: Յոլորը փայլուն, շքեղ, ժըպտուն: Ո՞վ և ասում թե զբանք հասարակ իրեր են: Դրանց բոլորի մեջ ժպիտ կա—կանչ՝ դեպի նոր կյանքը, դեպի ապագան:

Նարգիզն ապրում ե, ապրում այդ բոլորը մեկ մեկ, շոշափող զգացումով, ֆիզիքական ախորժանքով: Յեկ այնքան խորն և այդ զգացումը, այդ իրերի կենդանի տպավորությունը, վոր նա խանդադատվում ե:

Այս Նարգիզը նոր և կյանք դուրս յեկել: Նա նոր և սովորել գրել կարդալ և արագ մըտավ կյանքի ջրապտույտը, և ահա ադահությամբ ծծում է կյանքի, իրերի հաճույքը: Վերադարձավ հյուրանոց:

Շենքի կամարների ոեզնանուը դիպավ նրա ականջին: Այդ ձայնի մեջ կա մի նորալեզու բառ, վոր Նարգիզի հետ խոսում ե նոր կենցաղի հրաշալիքներից: Վեր գնացող սանդուխները տանում են վոչ թե մաքուր սենյակներ, այլ կա: Վիճային կամարների մի ճերմակ աշխարհ: Այնտեղ վերև պատգամավոր կանանց սենյակ ելին հատկացըել: Նարգիզը որվա ուրախություններով հարբած ներս մտավ:

Նրա դիմացն յելավ հեռավոր գավառներից

մեկի պատգամավորուհի Սավդյուլը, մի ճակատով, զալում կնիկ, գյուղխորհրդի նախագահ:

— Հը, մւբ եյիր, աղջի՛, ի՞նչ ես շատ թրկ դալի:

— Կնկա եյի ման գալի, վոր մարդիս պըսակեմ:

Քրդուհիները փրթկացին: Իսկ թրքուհիները թարգմանեղ տալով նրա ասածը՝ կես լուրջ կես կատակ ասացին.

— Գտի, գտի, մի մի հատ ել մեզ համար: Յերեկոյան բոլորը գնացին համազումար:

Մանելով թատրոնի շենքէց ներս՝ Նարգիզը գնաց ըթից ցուցահանդեսը, ուր դրած երյերկրի բոլոր արդյունաբերության արգասիքը: Կաշիներ՝ գույնգույն, փայլուն. ծխախոտ, տեքստիլի նախշուն կտորեղենը, մարմար, սապոն, արթիկտուֆ, յերկաթեղեն, բամբակ...

Ապա խոնված բազմության արանքով սահեց ներս: Պատգամավորները ծեփ եյին տվել սրահը, վոր գոռում եր նրանց մոլացից: Նարգիզը ներս մտավ ու նստեց:

Բեմը լցվեց: Համագումարը բացվեց ինտերնացիոնալի թնդյունով, վոր արձակեց կարմիր բանակային որկեստրը պատշգամբից: Հետո լսվեց նորընտիր նախագահության անունները և մինչ նարգիզը ուշըի կդար՝ ի՞նչ վոր ծափե-

թի մի մրբիկ թոցը եց նրան բեմ։ Ծափերի կար-
կուտի մեջ նստեց կարմիր սեղանի հետև և իր
շուրջը տեսավ բանվոր զյուղացի տղամարդիկ,
թուրք ու յեղիդի կանայք։

Բեմը շառագունել եր աբյունոտ արշալույ-
սի պես. այնտեղ հրդեհվում եյխն դրոշները
վառ վարագույրներն ու սեղանը կարմիր ծած-
կոցով։

Պատշամից շողշողացին շեփորների կրակ-
ները, հետո սրահում ելեքտրական կարմիր
լույսերի մեջ պայծառ որվա պես հոսեցին կի-
նոյի լուսարձակները։

Ներս մտավ Անդրժողկոմխորհի նախագահը
և սրահում պայթեց վորոտալի ծափահարու-
թյունը։ Բանակայինները շեփորեցին վողջույ-
նը, վոր ծափերի ուռաների մրբկի մեջ ճայ-
թում եյին։

Տրա—տա, տրա—տա...

Տրա—տա, տրա—տա...

Ու բեմի, սրահի, դրոշների այս կարմիր
բոցերի մեջ Անդրժողկոմխորհի նախագահը խո-
սում եւ համաշխարհային հրդեհի մասին։

Այս ամենը տեսնում, լսում եւ նարգիզը և
ժպտում ինչպես համեստ ծաղիկ, վոր դուրս ե
յեկել արևերես։ Կարմիր թաշկինակը գլխին։

Գիտե՞ն առ թե ինչ հրդեհի մեջ եւ այժմ...

Ժապառմ եւ նարգիզը, իսկ նրա շուրջը կար-
միք վարագույրների հրդեհի մեջ դրոշների բո-
ցերը ժպտում են մի ուրիշ դաժանատեսիլ ժը-
պիտով։ Կայծակն եւ ցոլում նրանց մեջ, գալար-
վում մեծ փոթորիկը, վոր պայթելու յեւ ամբողջ
աշխարհի գլխին։



Հ Ե Բ Մ Ե Ս

Հրատարակչության հրատարակությունները

Գ Ե Ղ Ա Ր Վ Ե Ս Ս Ա Կ Ա Ն

- | | | |
|-----|--|-----------|
| 1. | Ս. ԶՈՐՅԱՆ. — Գրադարանի Աղջիկը | 50 կ. |
| 2. | » Հեղկոմի նախագահը | 40 » |
| 3. | ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ. — Ժամանակակից Մելոզբամ | 60 » |
| 4. | » Պոլծագուլ պիես | 25 » |
| 5. | » Մի գլխարկի պատմություն | 40 » |
| 6. | ԴԵՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆ. — Ծանոթներ, ժողովածու | 40 » |
| 7. | » Նրանց ժպիաը, ժաղովածու | 70 » |
| 8. | » | 30 » |
| 9. | Ա.Վ. ԽԱՇԱԿՅԱՆ. — Աքաւ Լալա Մահարի | 80 » |
| 10. | » Համբերանքի չիբուխը | 40 » |
| 11. | ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ. — Գույների կոփվը | 1 ր. 50 » |

Ս Ա Ն Կ Ա Կ Ա Ն

- | | | |
|-----|--|------|
| 12. | Ս. ԶՈՐՅԱՆ. — Ելեքտրական լամպը (պատկերագ.) | 35 » |
| 13. | ՎԱՐԴԱՐԱՅԻ (Փոխադրութ.). — Քիքորի յերազը,
պունատիպ | 75 » |
| 14. | ՄԻՔ. ԶՈՐԱՅՅԱՆ. — Մորեփը, բնագիտական գրույց
(պատկերագրդ) | 40 » |

Ա Բ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

- | | | | |
|-----|---|--|------|
| 15. | » | 50 » | |
| 16. | » | — Золото в схемах простого воспроизведения (очерк по теории воспроизведения) | 1 ր. |
| 17. | Г. В. БЕБУТОВ. — Л. Н. Толстой и Хаджи-Мурат | 50 կ. | |
| 18. | ԱՄՈՒՄՈՒԹՅԱՆ. ԸՆՏԱՆԻՔԻ և ԽԱՇԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐԵՆՔԸ (ՀՍԽՀ Արդյուղիումատի մատի մատչելի պարզաբանությամբ) | 70 » | |

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.



Дереник Демирчян

И х у л ы б к а

Книгоиздательство „Гермес“
Эреванъ, ул. Маркса 29. -

ՀՀ Ազգային գրադարան



NL0332504

2 + 922